

ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ

# ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

(Ի ն ք ն ա կ ե ն ս ա գ ռ ա կ ա ն ձ ե ռ ա գ ռ ե ռ ը)

ՄԱՍՆ Է.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Վահէ Ղազարեան*

## ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԸ

1894 թուականի ընթացքում, Յիսուս Մանկան քոյր Թերեզյան հիւանդացաւ կոկորդի շարունակական ցաւով, որի համար բժիշկները որպէս դեղամիջոց նշանակեցին արծաթի նիտրատով խարանուկները: Այդ օրերին նա շատ տառապեց:

1896ի Ապրիլի 4ին, Աւագ Ուրբաթ օրը, ունեցաւ առաջին արիւնաթքումը: Նոյն տարուայ Յունիսին կամ Յուլիսին բռնուեց չոր, գրեթէ աննշմարելի հագով: Բժիշկ Դը Քոռնիէրը, վանքի բժիշկը, այցելեց նրան ու ասաց, թէ առայժմ ծանր ոչինչ չկար: Պատուիրեց ընդունել կազդուրիչ դեղահատեր միայն:

Նախքան իր աւարտին կը հասնէր 1897 թուականի Մեծ Պահքը, քոյր Թերեզյան հիւանդացաւ ծանր կերպով: Բժշկական գանազան, ընդհանրապէս անօգուտ խնամքների հետեւանքում կորցրեց ախորժակը եւ շուտով այլեւս ոչինչ չէր կարողանում մարսել: Ամէն օր, կէսօրուայ ժամը 3ի մօտ, ունենում էր բարձր ջերմաստիճան:

1897ի Յուլիսի 6ին ունեցաւ նոր արիւնաթքումներ եւ բժիշկը ախտորոշեց արեան ծանրագոյն համախոռնում թոքերի մէջ. արգելեց որեւիցէ շարժում, պատուիրեց մանանխային ծեփելիքներ, տգրուկներ, եւ այլն: Այս բոլորին աւելացաւ նաեւ շնչառութեան դժուարացումը եւ առատահոս քրտինքի պատճառով ուժերի սպառումը:

Երկու օր անց, Յուլիսի 8ին, տեղափոխուեց հիւանդների բաժին:

Մինչեւ Օգոստոսի սկզբները, արիւնաթքումները կրկնուում էին օրը երկու-երեք անգամ, իսկ շնչառական ճգնաժամերն ահաւոր էին:

Ամէն օր շարունակում էր սպառել նրան բարձր ջերմաստիճանը. հիւանդը չէր դադարում կրկնելուց՝ թէ գգում էր իրեն կարծես քաւարանում:

Յուլիսի 30ին ստացաւ Հիւանդաց Օժումը: Միաբանակիցներից ներողութիւն հայցեց, այնքան յուզիչ խօսքերով, որ ոչ ոք չկարողացաւ զսպել արցունքների հոսքը:

Մարտիրոսութեան դեռ երկու ամիս եւս ունէր անցկացնելիք, որոնք դիմագրաւեց հերոսական համբերութեամբ: Չնայած իր տառապանքներին, անկեղծ գուարթութեամբ ջանում էր մեղմացնել այն ամէնը՝ ինչ ողբերգական էր իր վիճակում եւ կարող էր ընկճել միաբանակից քոյրերին: Բառախաղ, զանազան կատակաբանութիւններ, ձեւացում, գուարթախօսութիւններ ինքն իր մասին եւ կամ՝ իր բժիշկների անկարողութեան. Թերեզյան ունի կատակաբանութիւնների մի զանազանեալ ցուցակ, որը ցոյց է տալիս նրա բնաւորութեան խորքը եւ եղբայրական սէրը:

Յունիսի 9ին իր հոգեւոր եղբայրներից մէկին՝ Հայր Բէլիէրին գրել էր. «Չեմ մեռնում, մտնում եմ կեանք»: Մահից յետոյ սկսուելու էր Յիսուս Մանկան Սրբուհի Թերեզայի հրաշագործ կեանքը, Ամենասուրբ Երրորդութեան փառքի եւ հոգիների փրկութեան համար, երգելով Տիրոջ ողորմութիւնը:

**ՅԻՍՈՒՄ ՄԱՆԿԱՆ ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԱՅԻ  
ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՎԵՐՁԻՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ  
ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍՔԵՐԸ, ՈՐՈՆՔ ՔԱՂՈՒԱԾԱԲԱՐ  
ԳՐԻ ԵՆ ԱՌՆՈՒԵԼ ՄԱՅՐ ԱԳՆԷՍ ՅԻՍՈՒՄԻ՝  
ՍՐԲՈՒՀՈՒ ՓՕԼԻՆ ԶՐՈՋ ԿՈՂՄԻՑ**

15 ՄԱՅԻՍ 1897

*Իմ համար միեւնոյնն է ապրելն ու մեռնելը: Յստակ չեմ տեսնում՝ թէ այժմ իսկ ունեցածիցս աւելի ինչ կարող եմ ստանալ մահիցս յետոյ ... : Կը տեսնեմ մարդասէրն Աստծուն, ահա սա միայն: Որովհետեւ ինչ վերաբերուած է իր հետ լինելուն, ամբողջովին իրեն եմ միացած արդէն այստեղ՝ երկրի վրայ:*

*Ուրախ եմ շուտով Երկինք մեկնելուս համար, բայց երբ մտածում եմ Տիրոջ խօսքերի վրայ, թէ՛ «Ահա գալիս եմ շուտով, եւ իմ հետ են իմ վարձերը, որպէսզի հատուցեմ իւրաքանչիւրին ըստ իր գործերի»<sup>1</sup>, ասում եմ ինքս ինձ՝ թէ բաւական չփոթում է առաջանալու իմ պարագային, որովհետեւ գործեր ... ես չունեմ դրանցից եւ ոչ իսկ մի հատ ... : Չի կարող, հետեւաբար, վարձատրել ինձ ըստ իմ գործերի: Շատ աւելի լաւ վստահ եմ, որ կը վարձատրի ինձ ըստ իր գործերի:*

*Եթէ մի անհնարին ենթադրուի՞նք համաձայն՝ Աստուած ինքն անգամ չտեսնէր իմ բարի գործերը, չէի վշտանայ: Նրան այնքան եմ սիրում, որ կ'ուզէի սիրոյս եւ փոքրիկ գոհողութիւններս միջոցով հաճոյք պատճառել իրեն, նոյնիսկ եթէ Նա չիմանար, որ դրանք գալիս են ինձնից: Իմանալով եւ տեսնելով դրանք, կարծես պարտադրուած կը լինէր փոխհատուցելու ... : Իրօք, չէի կամենայ այդ վիշտը պատճառել Նրան:*

*Այնքա՛ն կ'ուզէի Հանոյի Կարմեղոս առաքուել, որպէսզի շատ ու շատ տառապէի մարդասէր Աստծոյ համար: Կ'ուզէի այնտեղ գնալ, եթէ առողջանամ, միայնակ լինելու համար, միսիթարութիւններ չունենալու համար, երկրի վրայ բերկրանք չունենալու համար: Շատ լաւ գիտեմ, որ Աստուած կարիքը չունի մեր գործերի, եւ վստահ եմ, որ անօգուտ կը լինէի նաեւ այնտեղ: Բայց կը տառապէի ու կը սիրէի: Սա է միակ արժէքաւորն ըստ իր գնահատման:*

18 ՄԱՅԻՍ

*Ազատեցին ինձ բոլոր պարտականութիւններիցս: Խորհեցի, որ մահս իրօք վնաս չի պատճառի Միաբանութեանը:*

*Հարցեցի. «Տիաճութի՞նն է միաբանակիցների աչքին անօգուտ անդամ երեւալը»:*

*Ա՛հ, ո՛չ: Դա բոլոր մտահոգութիւններիս մէջ վերջինն է: Իսկապէս միեւնոյնն է իմ համար:*

---

<sup>1</sup> Յյտ 22, 12

Զարմանքս յայտնեցի իրեն, որ հակառակ իր ծանր վիճակին՝ երբեք պարսպ չէր մնում:

Միշտ կարիքն ունեւմ ինչ որ մի աշխատանքով զբաղուելու. այսպիսով ինձնից դուրս եւմ վռնդում բոլոր մտահոգութիւնները, ինչպէս նաեւ չեւմ վատնում ժամանակը:

Առաջ շատ էի խնդրում Տիրոջից, որպէսզի կարողանայի հետեւել միաբանակիցներիս ընդհանուր աշխատանքներին մինչեւ մահուանս պահը: Զուգեց գոհացնել ինձ: Եւ սակայն, կարծում եմ՝ թէ կը կարողանայի գործակցել բոլորին, չէի մեռնի մի ըոպէ ակելի շուտ: Երեւակայում եմ, երբեմն, որ եթէ այս խնդրանքս ներկայացրած չլինէի, չէի հիւանդանայ:

19 ՄԱՅԻՍ

Հարցրեցի. «Ինչո՞ւ ես այսօր այսքան ուրախ»:

Որովհետեւ այս առաւօտեան երկու փոքրիկ տհաճութիւն ունեցայ, ա՛հ, որքա՛ն դիւրագգաց եւմ դարձել ... : Ոչինչ ինձ փոքրիկ ուրախութիւն չի պատճառում, եթէ ոչ միայն՝ փոքրիկ վշտերը:

20 ՄԱՅԻՍ

Ասում են՝ թէ կը վախենամ մահից: Թերեւս: Եթէ իմանային՝ թէ որքան անվստահ եւմ անձիս նկատմամբ: Երբեք չեւմ յենում իմ մտքերի վրայ. շատ լաւ գիտեմ՝ թէ որքան տկար եմ: Բայց այժմ ուզում եմ վայելել այն զգացումը, որ ողորմածն Աստուած տալիս է ինձ այս պահին: Դեռ շատ ժամանակ կ'ունենամ հակառակը զգալու, եւ հետեւանքում տառապելու համար:

21-28 ՄԱՅԻՍ

Գիտեմ, որ շուտով մեռնելու եմ: Բայց ե՞րբ: Ա՛հ, չի հասնում ժամը: Նման եւմ մի մանկան, որին խոստանում են կարկանդակ տալ, ցոյց են տալիս հեռուից ... իսկ յետոյ, երբ մօտենում է վերցնելու, ձեռքը ետ է քաշում: Սակայն ինձ լիովին յանձնում եւմ Աստուծոյ ձեռքերին, լինի ապրելու թէ մեռնելու համար: Կ'ուզեմ նոյնիսկ առողջանալ ու առաքելութեան մեկնել Չինաստան, եթէ դա է Աստուծոյ կամքը:

Մահիցս յետոյ խնդրում եւմ չթոյլատրել դադաղիս համար ծաղկեպսակների նուիրատուութիւնը, ինչպէս կատարուեց Մայր Զենովէֆֆայի համար: Ի գուր վատնուած դրամ է: Ահա թէ ինչպէս վարուէք. դրամը ծախսող անձանց խնդրէք, որ այդ գումարով ստրկութիւնից փրկագնեն խեղճ փոքրիկ սեւամորթներին: Ասացէք նրանց, որ ինձ հաճելի է այդ բարերար գործը:

Մի ժամանակ, իմ համար մեծ տխրութեան աղբիւր էր արժէքաւոր դեղորայքի ընդունումը, մինչ այժմ այս հանգամանքը նուազ կարեւորութիւն ունի իմ համար, որովհետեւ Սրբուհի Ժերթրուդի վարքում կարգացի, որ նա ուրախանում էր, երբ այդպիսի դեղամիջոցներ էր ստանում, մտածելով, որ դա հոգեւոր պարգեւներ էր ծնում այն անձանց համար, որոնք բարեգործում էին իրեն: Հիմնում էր մեր Տիրոջ խօսքերի վրայ. «Ինչ իմ այս փոքր եղբայրներից մէկին անէք, իմ համար արած կը լինէք»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մտթ 25, 40

Համոզուած եմ, որ դեղերը չեն կարող առողջացնել ինձ: Բայց ահա թէ ինչպէս գործերը կարգի դրեցի ողորմած Աստուծոյ հետ, որն այդ դարմանումների ներգործութիւնը կ'օգտագործի այլեւս ի նպաստ խեղճ առաքեալների, որոնք բուժուելու ո՛չ ժամանակ ունեն, ո՛չ էլ միջոցներ: Ես Տիրոջից խնդրում եմ, որ ինձ շուրջուած բոլոր խնամքները բժշկեն նրանց:

Շատ անգամներ ինձ կրկնեցին՝ թէ քաջ եմ: Եւ սա այնքան քիչ է համապատասխանում իրականութեանը, որ այլեւս ստիպուած էի ինքս ինձ ասել. «Ձի կարելի այս աստիճան խաբկանքի մէջ թողնել մարդկանց»: Աշխատեցի, շնորհի օգնութեամբ, քաջարի լինել: Նմանուեցի այն մարտիկին, որին ողորդում են հաճոյախօսութիւններով, եւ նա, տեղեակ իր վատասրտութեանը, սկսում է ամաչել գովասանքներից, այնքան՝ որ կամենում է այդուհետեւ արժանի լինել դրանց:

Նախընտրում եմ խուցիս մէջ մնալ՝ քան իջնել հիւանդների բաժին, որովհետեւ այստեղ չեն լսում թէ որքան եմ հազում, եւ չեմ խանդարում ոչ ոքի: Նաեւ երբ գտնում եմ ինձ չափազանց լաւ խնամքներով պատուած, այլեւս չեմ կարողանում վայելել վշտերս:

Եթէ չկրէի այս փորձութիւնն ընդդէմ հաւատքի, որն ես ինքս էլ չեմ կարողանում ըմբռնել ... կարծում եմ թէ կը մեռնէի ուրախութիւնից, երբ կը մտածէի՝ թէ շուտով թողնելու եմ երկիրը:

Իրօք չեմ սարսափում վերջին պայքարներից, հիւանդութեան պատճառած տառապանքներից, որքան էլ դրանք մեծ լինեն: Աստուած ինձ օգնել եւ առաջնորդել է մանկութեանս օրերից ի վեր. Իրեն եմ յանձնում եւ վստահում անձս: Կասկածներ չունեմ, որ կ'օգնի մինչեւ վերջ: Կը կարողանամ տառապել, ուրեմն, մինչեւ վերջին սահմանագիծը, բայց ոչ երբեք՝ չափազանց: Համոզուած եմ սրան:

Չեմ կամենում աւելի մեռնել՝ քան ապրել: Այսինքն, եթէ ընտրութեան հարց առաջանար, կը գերադասէի մեռնել, բայց քանի որ Աստուած Ինքն է ընտրում իմ փոխարէն, ես նոյնպէս հաւանութիւնս տալիս եմ Իր կամքին: Սիրով եմ ընդունում Իր որոշումները:

Մի՛ կարծէք, որ եթէ առողջանամ, կը շեղուեմ իմ ճանապարհից, կամ թէ բժշկումս ի վիճակի կը լինի խարխուլելու ծրագրերս: Ո՛չ, ո՛չ: Տարիքը ոչինչ է Աստուծոյ առաջ, եւ ես այնպէս կ'անեմ, որ փոքրիկ մանուկ մնամ, եթէ նոյնիսկ շարունակեմ երկա՛ր երկա՛ր ապրել:

Միշտ աչքերիս առջեւ է իրերի լաւ կողմը: Ոմանք վշտանում են ամէն ինչի համար, այն առաւելագոյն չափով, որ հնարաւոր է: Իմ պարագայիս ճիշտ հակառակն է. նոյնիսկ եթէ տառապանքս ծայրաստիճան դառն է, եթէ երկիրնքն այնքան թխպալից է, որ չեմ կարողանում տեսնել աստղերը, է լաւ, հէնց այս իրավիճակն եմ դարձնում իմ ուրախութիւնը:

29 ՄԱՅԻՍ

Այսօր շատ էր տառապում: Վերցրի Սուրբ Աւետարանը, որպէսզի մի որեւիցէ հաստուած կարդայի իր համար, եւ անս այս խօսքերին հանդիպեց հպլեացքս. «Նա յարութիւն առաւ, այստեղ չէ: Ահաւասիկ այն տեղը, ուր Նրան դրել էին»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մրկ 16, 6

Այո՛, ճիշտ այդպէս է, իրականում այլեւս անմատչելի եմ բոլոր վշտերի համար, ինչպիսին չէի մանկութեանս շրջանում: Յարուցեալի նման եմ, այլեւս այնտեղ չեմ՝ ուր ինձ կարծում են: Մայր իմ, մի՛ մտահոգուէ՛ք ինձնով: հասել եմ մի աստիճանի, ուր այլեւս չեմ կարողանում տառապել, որովհետեւ բոլոր վշտակրութիւններն իմ համար քաղցր են:

30 ՄԱՅԻՍ

Ասացի իրեն. «Թերեւս շատ կը տառապես մահիցդ առաջ»:

Ա՛հ, թող դա ձեզ վիշտ չպատճառի, որովհետեւ դա է իմ միակ, այո՛ միակ փափաքը:

4 ՅՈՒՆԻՍ

Մեզ «ցոտաւորին» ասաց (մեզ՝ իր երեք քոյրերին): Թու՛մ էր կերպարանաւորուած, կարծես թէ չէր տառապում:

Խնդրեցի Ամենասուրբ Կոյսին, որպէսզի այսուհետեւ թմրած ու ընդարմացած չլինեմ, ինչպէս այս վերջին բոլոր օրերի ընթացքում: Շատ լաւ եմ զգում, որ վշտացնում եմ ձեզ: Այս երեկոյ լսեց ինձ: Ա՛հ, քոյրեր իմ, որքան երջանիկ եմ: Տեսնում եմ, որ շուտով մեռնելու եմ. սրանում համոզուած եմ, այժմ:

Չզարմանաք, եթէ չյայտնուեմ մահիցս յետոյ, եւ եթէ չտեսնէք ոչ մի արտասովոր բան, որը երաշխիքը կը լինէր իմ երջանկութեան: Յիշէ՛ք, որ իմ փոքրիկ ճանապարհին յատուկ է տեսիլքներ չուզելը: Լաւ գիտէ՛ք այն՝ ինչ բազում անգամներ կրկնել եմ Աստծուն, Հրեշտակներին ու Սրբերին. «Իմ փափաքը նրանց այստեղ երկրի վրայ տեսնելը չէ»:

«Հրեշտակները կը գան քեզ դէպի Երկինք ողեկցելու», – ասաց քոյր Ժընըվիէրը:

Չեմ կարծում՝ թէ կը տեսնէք նրանց. դա, սակայն, արգելք չի հանդիսանայ նրանց ներկայութեանը:

Եւ այնուամենայնիւ, կ'ուզէի գեղեցիկ մահ ունենալ, ձեզ հաճոյք պատճառելու համար:

Խնդրեցի Սուրբ Կոյսից, եւ կարծում եմ՝ թէ Աստուածամօրից խնդրելը նոյնը չէ՛ ինչ Տիրոջից խնդրելը: Նա ինձնից շատ աւելի լաւ գիտէ՛ թէ ինչպէս պէտք է վարուի իմ փոքրիկ փափաքների հետ. արդեօք պէ՞տք է դրանք Տիրոջը ներկայացնի կամ ոչ: Մի խօսքով, նրա կամքին եմ թողնում մարդասէր Աստծուն չստիպելը ունկնդրելու ինձ, թողնելն իրեն ի կատար ածելու իր կամքն ամէն ինչում ամբողջովին:

Չգիտեմ՝ թէ արդեօք կը գնա՞մ քաւարան: Սրանով ամենեւին չեմ մտահոգուում: Բայց եթէ նոյնիսկ գնամ, չեմ զղջայ՝ որ ոչինչ չարեցի նրանից խուսափելու համար, չեմ վշտանայ՝ որ աշխատեցի միմիայն հոգիների փրկութեան համար: Որքա՛ն մեծ եղաւ երջանկութիւնս, երբ իմացայ՝ որ Սրբուհի Թերեզա Աւիլացին նոյնպէս այսպէս էր մտածում:

*Մի՛ վշտացէք, եթէ մահուանս պահին շատ տառապեմ եւ չտեսնէք, ինչպէս արդէն ասացի, երջանկութեանս ոչ մի նշան: Մեր Տէրն ուզեց որպէս սիրոյ զոհ մեռնել, եւ գիտէք՝ թէ ինչպիսին եղաւ իր մահը:*

Այդ նոյն օրուայ կեսօրին, որովհետեւ տեսնում էի նրան շատ վշտակիր, ասացի իրեն. «Քո իսկ կամքն էր տառապելը եւ Աստուած դա շմոռացաւ»:

*Ուզում էի տառապել, եւ աղաչանքս լսուեց: Այս վերջին օրերի ընթացքում շատ կրեցի: Մի առաւօտ, գոհութեան աղօթքի պահին, մահաշունչ տրտմութիւն թափուեց վրաս, եւ այդ բոլորի հետ միասին՝ ոչ մի մխիթարութիւն:*

*Ամէն ինչ ընդունում եմ ի սէր Աստծոյ, նաեւ արտառոց մտքերը, որ այցելում են ինձ ու ձանձրոյթ պատճառում:*

## 5 ՅՈՒՆԻՍ

*Զվշտանաք, եթէ առաւօտեան ինձ մեռած գտնէք: Պարզապէս կը նշանակի, որ մեր մարդասէր Աստուած Հայրիկը եկել է ինձ տուն տանելու: Անշուշտ մեծ շնորհ է մահուանը նախապատրաստող Խորհուրդների ընդունումը, բայց երբ Տէրը չի կամենում, դա էլ է լաւ: Ամէն բան շնորհ է:*

## 6 ՅՈՒՆԻՍ

*Շնորհակալ եմ, Մայր իմ, որ խնդրեցիք տալ ինձ Սուրբ Նշխարի միայն մի փոքրիկ մասնիկը: Այնքա՛ն ճիգ գործադրեցի այն կողմ տալու համար: Բայց որքա՛ն երջանիկ էի մարդասէրն Աստծուն սրտիս մէջ ունենալուս համար: Արտասուեցի՝ ինչպէս Առաջին Հաղորդութեանս օրը:*

*Վարդապետը հարցրեց ինձ. «Համակամութեա՞մբ ես ընդունում մահը»: «Հայր, – պատասխանեցի, – կարծում եմ՝ թէ համակամութեան կարիք կայ ապրելու համար միայն: Իսկ մահուանն ի տես, ուրախութիւն է, որ զգում եմ»:*

## 7 ՅՈՒՆԻՍ

Իմ օգնութեամբ մի փոքրիկ գրասանք կատարեց պարտեզում: Վերադարձին, կանգ առաւ դիտելու մի թխամայր, որ պաշտպանում էր ճուտիկներին, իր թեւերը տարածելով նրանց վրայ: Աչքերն արցունքով լցուեցին: Հարցրեցի. «Լալի՞ս ես»: Այնժամ աիմով ծածկեց երեսը, անելի ազատ արտասուելով, ու պատասխանեց.

*Այժմ չեմ կարող ասել ինչու, շատ յուզուած եմ:*

Աւելի ուշ, մի երկնային արոսայտութեամբ ասաց.

*Զկարողացայ զսպել ինձ, երբ մտածեցի, որ բարին Աստուած այդ օրինակով կամեցաւ հասկացնել մեզ իր սէրն ու գորովը: Ամբողջ կեանքիս ընթացքում այսպէս վարուեց իմ հետ, ամբողջովին թաքցրեց իր բազուկների հովանու ներքոյ: Քիչ առաջ չէի կարողանում հանգստանալ. սիրտս լի է երախտագիտութեամբ ու սիրով:*

*Աւետարանում ասուում է<sup>1</sup>, որ Տէրը գալու է գողի նման: Այո՛, շուտով կը գայ ինձ գողանալու: Որքա՛ն կ'ուզէի օգնել գողին:*

Քոյր Մարիա Սուրբ Սրտին (իր ամենամեծ քոյր Մարիային), որն իրեն ասում էր. «Ինչպիսի՞ ցաւ է պատճառելու մեզ մահոյ»:

*Ա՛հ ո՛չ: Կը տեսնէք, լինելու է ինչպէս վարդերի անձրեւ: Այո՛, վարդերի անձրեւ եմ տեղացնելու:*

*Նման եմ այն մանկանը, որը երկաթուղային կայարանում սպասում է իր հօրն ու մօրը, որպէսզի իրեն գնացք նստեցնեն: Աւա՛ղ, չեն գալիս, իսկ գնացքը մեկնում է: Բայց կան դեռ ուրիշ շատ գնացքներ, եւ չեմ կարծում՝ թէ կը կորցնեմ դրանք բոլորը:*

## 10 ՅՈՒՆԻՍ

*Սուրբ Կոյսին յաճախ եմ խնդրում ասել Տիրոջը, որ փափկանկատութեամբ չվարուի հետս: Երկնքի Թագուհին սիրով է կատարում խնդրանքներս: Եւ ահա, այս հիւանդութիւնիցս այլեւս ոչինչ չհասկանալով, աւելի լաւ եմ ինձ գգում: Յանձնում եմ իրեն եւ երջանիկ եմ: Ի՞նչ էր լինելու արդեօք վիճակս, եթէ շուտ մեռնելու յոյս սնուցէի: Ա՛հ, քանի՛ քանի՛ պատրանքներ: Բայց ես այդ յոյսը չունեմ, որովհետեւ գոհ եմ այն ամէն ինչի համար, որ անում է Աստուած. միմիայն իր կամքն եմ կամենում կատարել:*

## 14 ՅՈՒՆԻՍ

*Եթէ տառապանքներն ու նեղութիւնները կրենք պահ առ պահ, առանց յաջորդ վայրկեանի մասին մտածելու, շատ ու շատ աւելիին կը կարողանանք համբերել:*

## 15 ՅՈՒՆԻՍ

Հարցնում էի իրեն. «Յոզնա՞ծ ես տեսնելով, որ միւսանդակին վիճակդ երկարաձգում է, եւ մտաւարար՝ անելի շատ ես տատապում»:

*Տառապե՞լ: Այն հաճելի է ինձ:*

«Ինչո՞ւ»:

*Որովհետեւ հաճելի է Աստծուն:*

*Երջանիկ եմ: Թւում է ինձ, թէ հիւանդութեանս ընթացքում իրօք չվշտացրի Աստծուն: Քիչ առաջ գրում էի Սիրոյ մասին<sup>2</sup>: Յաճախ այցելուներ եկան ու խանդարեցին: Աշխատեցի համբերութիւնս չկորցնել եւ առաջին հերթին ես ինքս գործադրել այն՝ ինչ գրում էի:*

<sup>1</sup> Մտթ 24, 43-44

<sup>2</sup> Հմմտ. Ձեռագիր Գ, հատ. 288...

Պարտեզում էր, հիւանդների անուար աթոռին անսած: Երբ կէսօրին իրեն մօտեցայ, ասաց.

*Քանիցս լաւ եմ հասկանում Սրբուհի Թերեզային ուղղուած մեր Տիրոջ խօսքերը: «Գիտե՞ս, դուստր իմ, թէ ով է ինձ իսկապէս սիրում: Ով համոզուած սրտով խոստովանում է, որ ինձնից դուրս ամէն բան պատրանք է, ուրիշ ոչինչ»<sup>1</sup>: Ա՛հ, որքան ճշմարիտ են այս խօսքերը: Այո՛, ամէն ինչ, Աստուծոց դուրս ամէն ինչ ունայնութիւն է:*

Ասացի իրեն. «Աւա՛ղ, ոչինչ չեմ կարողանալու ներկայացնել Տիրոջը մահիցս յետոյ, ձեռքերս ամբողջովին դատարկ են»: Պատասխանեց.

*Եթէ Պօղոս Առաքեալի բոլոր գործերն անգամ կատարած լինէի, անօգուտ ծառայ կը համարէի ինձ, կը թուար ինձ՝ թէ ձեռքերս դատարկ են: Բայց հէնց սա է կազմում իմ ուրախութիւնը, որովհետեւ ոչինչ չունենալով՝ ամէն բան կը ստանամ Աստուծոց:*

Յոյց տուեց Հաւատքի Տարածման Ժողովի տարեգրքերից մէկը, ուր խօսում էր մի սպիտակագգեստ սրբուհու երեսման մասին, որն իր կողքին մի նոր մկրտուած մանուկ ունէր: Ապա ասաց.

*Որոշ ժամանակ անց, ես էլ ահա այսպէս կ'ընկերակցեմ նոր մկրտուած մանուկներին:*

*Երէկ այս կողքս շատ էր ցաւում: Եւ ահա այսօր այլեւս անցեալ է: Ա՛հ, ե՞րբ եմ գնալու ողորմած Աստուծոյ մօտ: Որքա՛ն եմ փափաքում մեկնել Երկինք:*

Իրեն էի վստահում տխուր մտքերս եւ վիստաթիւնս մի թերացումից յետոյ, որի համար մեղադրում էի ինքս ինձ:

*Ինչ վերաբերում է ինձ, աշխատում եմ երբեք չվհատուել: Երբ թերանում եմ եւ սա ինձ տրտմեցնում է, գիտակցում եմ, որ այդ տրտմութիւնը հետեւանքն է իմ անհաւատարմութեան: Բայց կարծում էք՝ թէ բաւարարում եմ այդքանո՞վ: Ա՛հ ո՛չ: Շտապում եմ ասել մարդասէր Աստուծուն. «Աստուած իմ, գիտեմ, որ ես ինքս եմ վաստակել այս տրտմութիւնը: Բայց թոյլ տուր, որ այն հաւասարապէս Քեզ նուիրեմ, ինչպէս այն փորձերը, որոնք առաքում ես սիրուցդ դրդուած: Ցաւում եմ թերութեանս համար, բայց նաեւ գոհ եմ, որ այս տրտմութիւնն ունեմ Քեզ նուիրելու համար»:*

Վշտեր էր ունեցել եւ մտքերը ցրելու համար ասաց ինձ յոգնած, բայց խաղաղ դէմքով.

*Հոգեւոր սննդի կարիք ունեմ: Խնդրում եմ, իմ համար մի հատուած կարդացէք Սրբերի կեանքից:*

<sup>1</sup> S. TERESA D'AVILA, *Opere, Vita*, 40, 1.

«Կարդա՛մ սբ. Ֆրանչիսկո Ասսիզացու կեանքից: Ծառ հաճելի է. խօսում է ծաղիկների, թռչնակների մասին»: Պատասխանեց ծանր, լացակումած ձայնով.

*Ո՛չ, ո՛չ դրա համար ... այլ խոնարհութեան օրինակներ տեսնելու համար:*

#### 4 ՅՈՒԼԻՍ

*Մեր Տէրը, Խաչի վրայ, մեռաւ անձկութեան մէջ, եւ սակայն՝ ահա՛ սիրոյ համար յանձն առնուած ամենագեղեցիկ մահը: Անկեղծօրէն խոստովանում եմ, որ ինձ թւում է՝ թէ ճիշտ այն է՝ ինչ ես էլ հիմա զգում եմ:*

#### 5 ՅՈՒԼԻՍ

Խօսում էի իր հետ անկատարութիւններիս մասին: Ասաց.

*Ինձ նոյնպէս երբեմն պատահում է զգալ տկարութիւններ, բայց երբեք չեմ զարմանում: Եւ միշտ չէ, որ ինձ երկրային ոչնչութիւններից վեր եմ դնում այնքան պատրաստակամութեամբ, որքան կամենում եմ: Օրինակ, երբեմն փորձութիւնն եմ ունենում ասածս կամ արածս յիմարութեան պատճառով մտատանջուելու ... : Այդպիսի պահերին ինքս ինձ բռունցքներիս մէջ եմ հաւաքում ու ասում. «Աւա՛ղ, դեռ մեկնակէտում եմ, ինչպէս առաջ»: Բայց դա ասում եմ մեծ հանդարտութեամբ, առանց տրտմութեան: Այնքա՛ն քաղցր է սեփական տկարութեան ու փոքրկութեան զգացումը:*

*Մի՛ տիրէք ինձ այսքան հիւանդ տեսնելով, Մայր իմ փոքրիկ, որովհետեւ տեսնում էք՝ թէ մարդասէրն Աստուած ինչպիսի երանութեամբ է ողողում ինձ: Միշտ զուարթ եմ ու գոհ:*

#### 6 ՅՈՒԼԻՍ

*Բազմաթիւ փոքրիկ զոհողութիւններ եմ կատարում:*

«Զգացում է, որ այսօր բաւական գոհմանակ ես արիւն թքելուցդ յետոյ, եւ որովհետեւ մօտ ես տեսնում քեզ աստուածային Գողիւն»:

*Ա՛հ, նոյնիսկ եթէ չտեսնէի Նրան. այնքան եմ Իրեն սիրում, որ գոհ եմ Իր բոլոր արածների համար: Իր հանդէպ տածած սէրս մի կաթիլ անգամ չի նուազի, եթէ չգայ ինձ յափշտակելու: Ընդհակառակը ... : Երբ ինձ թւում է՝ թէ խաբում է ինձ, այնպիսի քաղցրախօսութիւններ եմ շռայլում Իրեն, որ այլեւս չի իմանում՝ թէ ինչպէս վարուի:*

Իր համար Նմանութեան գրքից մի գեղեցիկ հատում ընթերցելուցս յետոյ ասաց.

*Մեր Տէրը Զիթենեաց պարտէզում վայելում էր Ամենասուրբ Երրորդութեան ամբողջական երանութիւնը, եւ սակայն, Իր հոգեվարքը պակաս դժնդակ չեղաւ: Անըմբռնելի խորհուրդ է սա, բայց վստահեցնում եմ ձեզ՝ թէ որոշ բաներ իմ համար սկսում են այլեւս յստակուել, շնորհիւ այն փորձառութեան, որ կրում եմ:*

Կանթեղ էի վառում Ամենասուրբ Կոչի պատկերի առաջ, խնդրելով դադարեցնել Թերեզայի արիւնաթթումները.

Դուք ուրեմն ուրախ չե՞ք, որ մեռնում եմ: Ա՛հ, երջանկութեանս յարատեւութիւնն հաղորդելու համար անհրաժեշտ է, որ շարունակուեն արիւնաթքումներս: Բայց այսօր վերջացաւ:

Ա՛հ, ե՞րբ է գալու վերջին Դատաստանի օրը: Որքա՛ն եմ ուզում, որ հասած լինէր այդ պահը: Եւ ի՛նչ է լինելու նրանից յետոյ:

7 ՅՈՒԼԻՍ

Նոր արիւնաթքում:

Շուտով կը գնամ մարդասէր Աստծուն տեսնելու:

«Մահից վախենո՞ւմ ես, այժմ՝ երբ այն տեսնում ես մօտիկից»:

Վա՞րս ... միշտ աւելի քիչ:

«Վախենո՞ւմ ես Գողից: Այս անգամ արդէն շեմին է»:

Ո՛չ, չեմին չէ, ներս է մտել: Բայց ի՞նչ էք ասում, Մայր իմ թանկագին: Վախենո՞ւմ եմ արդեօք Գողից: Ինչպէ՞ս կարող եմ վախենալ մէկից, ում այսքա՛ն սիրում եմ: Այս խօսքը՝ «Աստուած թէեւ սպանի ինձ, ես շարունակելու եմ Իրեն յուսալ»<sup>1</sup>, հմայել է ինձ մանկութիւնիցս ի վեր: Սակայն բաւական ժամանակ անցաւ, մինչեւ կարողացայ հաստատուել Աստծոյ ձեռքերի մէջ ինքնայանձնումի այդ աստիճանում: Այժմ հասել եմ: Ողորմածն Աստուած վերցրեց ինձ Իր բազուկների մէջ եւ հաստատեց ինձ այդ աստիճանում:

Խնդրեցի իրեն մի քանի հոգեշափ խօսք ասել բժիշկ Դը Քունիէրին:

Ա՛հ, Մայր իմ, դա չէ իմ վարուելակերպը: Թող բժիշկ Դը Քունիէրը մտածի՛ ինչ ուզում է: Ես միայն պարզութիւնն եմ սիրում: Սարսափում եմ այս վերջինին հականիչ զգացումներից: Վստահեցնում եմ ձեզ, որ ըստ ձեր առաջարկի վարուելը խղճիս հակառակ արարք է իմ համար:

Յիշեցնում էի իրեն իր անցեալ կեանքը:

Տասնչորս տարեկանից սկսած՝ ես նոյնպէս ունեցել եմ սիրոյ բազում մղումներ: Որքա՛ն էի սիրում Աստծուն:

8 ՅՈՒԼԻՍ

Այնքան վատատոյջ էր, որ կամենում էինք հոգալ Հիւանդաց Օծումը: Երեկոյեան նրան ֆիւանդների բաժին փոխադրեցինք: Ժպիտը փայլում էր դեմքին:

Մի բանից եմ միայն վախենում: որ այս բոլորը փոխուի:

Դիտելով իր ցամաքած ձեռքերը.

Արդէն կմախք են դառնում: Այո՛, այսպէս աւելի հաճելի է ինձ:

<sup>1</sup> Յոր 13, 15

*Ա՛հ, անշուշտ թէ ուրախութիւնից ու սիրուց կ'արտասուեմ, երբ տեսնեմ Տիրոջը: Բայց ո՛չ, Երկնքում չպէտք է արտասուեմ: Բայց այո՛, կ'արտասուեմ, քանի որ Նա ասաց. «Սրբելու եմ արցունքները նրանց աչքերից»:*

Աշխատում էր գտնել զգայարաններով գործած ինչ որ մի մեղք, Հիւսնդաց Օծումից ասաց խոստովանելու համար: Հասաւ րոտոտելիքին: Խղձի ծայրաստիճան փափկութեամբ եւ կարծիքս իմանալու համար, ասաց.

*Յիշում եմ, որ շատ բնական հաճոյքով օգտագործեցի մի սրուակ օծանելիք, որ նուէր էի ստացել ճամփորդութեան ժամանակ:*

Ասաց լուրջ՝ բայց քաղցրիկ ձայներանգով, մի շրջանակում՝ ուր իրեն չէին հասկանում.

*Սուրբ Կոյսը շատ ճիշտ վարուեց ամէն ինչ իր սրտի խորքում թաքցնելով: Չեն կարող յանդիմանել ինձ, եթէ հետեւեմ իր օրինակին:*

*Կարելի է ասել՝ թէ Հրեշտակներն իրենց մէջ դաշինք են կնքել թաքցնելու ինձնից այն լոյսը, որն իմ համար պարզորոշ էր դարձնում մօտակայ վախճանս:*

Հարցրեցի. «Թաքցրել եմ նաեւ Սուրբ Կոյսի՞ն»:

*Ո՛չ, Սուրբ Կոյսը երբեք թաքցուած չի լինի իմ համար, որովհետեւ շատ եմ սիրում նրան:*

*Այնքա՛ն եմ փափաքում ընդունել Հիւանդաց Օծումը: Այդպէս ասելի լաւ կը կարողանան ծաղրել ինձ<sup>1</sup>:*

Ծնորհակալութիւն էի յայտնում իրեն՝ իր քաղցր ու հոգեւտփոխ խօսքերով մեզ մխիթարելու համար: Պատասխանեց.

*Քոյրեր իմ, ձեզ եմ նուիրում փոքրիկ պտուղներն իմ ուրախութեան, այնպէս՝ ինչպէս Աստուած տալիս է ինձ:*

*Երկնքում բազում շնորհներ կը ստանամ բոլոր նրանց համար, ովքեր բարեգործեցին ինձ: Ձեր համար, Մայր իմ, անհրաժեշտ եղածից շատ ու շատ ասելի, այնքան շատ՝ որ կարողանաք առաւելագոյն հրճուանք ապրել:*

*Եթէ իմանայիք՝ թէ Աստուծոյ առաջ որքան մեղմ է ընթանալու իմ դատը: Բայց եթէ նոյնիսկ մի քիչ յանդիմանուեմ Տիրոջից, հաւասարապէս քաղցր կը գտնեմ նաեւ այդ խօսքերը: Եթէ գնամ քաւարան, նորից գոհ կը լինեմ. կը վարուեմ ինչպէս Հին Կտակարանում յիշատակուող երեք մանուկները. կը զբօսնեմ կրակների մէջ, սիրոյ տաղեր երգելով: Ա՛հ, որքան երջանիկ կը լինէի, եթէ այդ միջոցով կարողանայի ազատել հոգիներին, տառապելով նրանց փոխարէն, որովհետեւ այդպիսով կը բարեգործէի. կ'ազատէի քաւարանում բանտարկուած հոգիներին:*

Ուշադրութիւնս հրաւիրեց այն փաստի վրայ, որ ասելի ուշ շատ երիտասարդ վարդապետներ, իմանալով՝ որ ինքը հոգեւոր քոյրն է եղել երկու առաքեալների, կարող էին միեւնոյն նամակագրական կապի շնորհը խնդրել: Զգուշացրեց, որ տուեալ պարագան կարող էր վտանգատու լինել որոշ հոգիների համար:

<sup>1</sup> Սրբուհին ի նկատի ունի այն հանգամանքը, որ որոշ միաբանակից քոյրեր լրջութեամբ չէին մօտենում իր հիւանդութեանը եւ իրեն մահամերձ չէին համարում:

Բոլորն էլ կարող են գրել այն՝ ինչ ես եմ գրել, եւ ստանալ միեւնոյն ծափահարութիւններն ու վստահութիւնը: Բայց միայն աղօթքով ու զոհողութեամբ է, որ կարող ենք օգտակար լինել Եկեղեցուն: Նամակագրութիւնը շատ հազուադէպ պէտք է լինի, եւ այն ուղղակի չպէտք է թոյլատրել որոշ միանձնուհիների, որոնց համար դա կը դառնար մտահոգութեան առիթ եւ կը կարծէին՝ թէ հրաշքներ են գործում: Իրականում, սակայն, կ'ընկնէին սատանայի խորամանկ որոգայթների մէջ: Մայր իմ, ասածս շատ կարեւոր է, աւելի ուշ՝ չմոռանաք այն:

Կարմեղոսում չպէտք է կեղծ դրամներ դիզենք, հոգիներին գնելու համար: Եւ յաճախ, գեղեցիկ խօսքերը՝ որ գրում են, եւ գեղեցիկ խօսքերը՝ որ ստանում են, կեղծ դրամի փոխանակութիւններ են:

*Սիրելի քոյրս ... իմ կարիքը կ'ունենայ ապագայում: Բայց մի՛ մտահոգուէք, կը վերադառնամ:*

9 ՅՈՒԼԻՍ

Խոստովանահայրը, որ եկել էր տեսնելու՝ թէ արդեօք յարմար ժամանակն է Հիւանդաց ֕Օժման խորհուրդը մատակարարելու, ասաց իրեն. «Ուզում ես շուտով Երկինք մեկնել, բայց դափնեպսակդ դեռ պատրաստ չէ: Այն նոր նոր սխել ես հիսել»:

*Ա՛հ, հայր իմ, արդար էք դատում: Ո՛չ, դեռ չեմ հիւսել դափնեպսակս, բայց մարդասէրն Աստուած Ինքն է, որ հիւսել է այն:*

10 ՅՈՒԼԻՍ

Հարցնում էինք. «Սրբերից ոմանք անգամ վախենում էին՝ թէ կարող էին դժոխքի դատապարտուել: Դու ինչպե՞ս չունես այս երկիւղը»: Պատասխանեց նորք ժպիտով.

*Մանուկները չեն դատապարտում, մանուկները ... :*

Թէեւ շատ էր տատապում, չգիտես ինչու ենթադրեց՝ որ թերեւս լրջօրէն հիւանդ չէ, եւ որ բժիշկը սխալում է:

*Եթէ հոգիս ամբողջովին թողլքած չլինէի Աստծոյ կամքին, եթէ տարուէի խնդութեան կամ թախիծի զգացումներից, որոնք այս երկրի վրայ արագօրէն յաջորդում են իրար, սա վշտի վիթխարի ալիք կը լինէր իմ համար: Բայց զգացումների այս բազմազանութիւնը մակերեսային կերպով է միայն հպում հոգուս: Սրանով հանդերձ, սակայն, չի դադարում մեծ փորձ լինելուց:*

Իր ներկայութեան խօսում էինք այն արկումների մասին, որ մահուան պահին երեսում են մահացողի դէմքին:

*Եթէ դա ինձ էլ պատահի, չտխրէք, որովհետեւ մահիցս անմիջապէս յետոյ ես միայն ու միայն ժպտալու եմ:*

11 ՅՈՒԼԻՍ

Յիշեցրի իրեն իր ինքնակենսագրական ձեռագիրը, խօսեցի այն բարիքի շուրջ, որ այն սփռելու էր հոգիներում:

Իմ փոքրիկ կեանքը գրելու համար, գլուխս չեմ կոտրում: Կարթով որսացող ձկնորսի նման եմ վարւում: Գրում եմ այն՝ ինչ ինքնըստինքեան բռնում է յիշողութեանս կարթով:

... Բայց ինչպէս պարզորոշ կ'երեւայ, ամէն ինչ գալիս է Աստուծոյ, եւ եթէ դրանց շնորհիւ հուշակաւոր դառնամ, դա ամբողջովին ձրի պարգեւ կը լինի եւ ինձ չի պատկանի: Բոլորն էլ կը համոզուեն սրան:

Այնտեղ ամէն ճաշակի յարմար բան կայ, բացի նրանցից՝ ովքեր բացառիկ ճանապարհներ են փնտռում:

Խօսում էր Սրբերի Հաղորդութեան մասին, եւ բացատրում էր՝ թէ ինչպէս է մէկի փառքը լինելու նաեւ միւսինը:

Ինչպէս մայրն է հպարտ իր որդիներով, այնպէս էլ մենք ենք լինելու մէկս միւսի հանդէպ, առանց նուազագոյն նախանձի:

Ինքնակենսագրական ձեռագրի վերաբերեալ:

Կարող են ենթադրել՝ թէ մեղանշած չլինելու համար է, որ այսքան մեծ վստահութիւն ունեմ Տիրոջ նկատմամբ: Ասացէք նրանց, Մայր իմ, որ եթէ գործած լինէի հնարաւոր բոլոր ոճիրներն անգամ, կ'ունենայի միշտ նոյն վստահութիւնը: Կը զգայի, որ մեղքերի այդ բազմութիւնը նման կը լինէր բոցակէզ հնոցի մէջ նետուած ջրի կաթիլին: Յետոյ պատմէք դարձի եկած մեղաւոր կնոջ պատմութիւնը, որը սիրուց հիւծուած մեռաւ: Հոգիներն իսկոյն կը հասկանան, այդ օրինակը նրանց կը քաջալերի:

Ահա այդ պատմութիւնը, որ նա բառ առ բառ թելադրեց:

Անապատի Հայրերի վարքերում ընթերցում ենք, որ նրանցից մէկը դարձի է բերում մի յայտնի մեղաւորուհու, որի անկարգութիւնները գայթակղութիւն էին ամբողջ շրջակայքի համար: Այդ մեղաւորուհին, շնորհից ազդուած, հետեւում է Սրբին անապատում, կամենալով ենթարկուել խիստ ապաշխարանքի, երբ ճամփորդութեան առաջին իսկ գիշերուայ ընթացքում, իր առանձնութեան համար ընտրուած վայրը դեռ չհասած, մահանում է սիրալի գղջման սաստկութիւնից, եւ ճգնաւոր միայնակեացը նոյն պահին տեսնում է՝ թէ ինչպէս են հրեշտակներն առաջնորդում նրա հոգին առ Աստուած: Ահա մի գունեղ նմոյշ այն բանի, որ կամենում էի ասել, բայց այսօրինակ ապրումների արտայայտումն անհնարին է:

Տառապում էր հաւատքի դէմ ուղղուած փորձութիւնների եւ մարմնի նուաղութեան պատճառով: Սկսեց արտասանել իր իսկ կողմից Սուրբ Կոյսին ուղղուած այս խօսքերը:

Եթէ Աստուծոյ Որդին ուզեց,

Որ Իր Մայրը նոյնպէս կրի խաւարը, անձկութիւնը սրտի,

Բարիք է, ուրեմն, տառապելն այստեղ՝ երկրի վրայ:

Այո՛ ... նեղութիւններին սիրով համբերելը

Երջանկութիւնների մէջ ամենաանխառն է:

Յիսուս կարող է ետ վերցնել ինձնից այն անէնն՝ ինչ տուել է:

Ասա նրան, որ ինձնով չմտահոգուի:

Եթէ Իր կամքն է, կարող է շատ լաւ թաքնուել:

Պատրաստ եմ սպասել Իրեն մինչեւ այն անմայրամուտ օրը,

*Երբ հաւատքս այլեւս մայր կը մտնի,  
Հասնելով իր նպատակակէտին՝ Աստուծոյ տեսութեանը<sup>1</sup>:*

Ասացի իրեն. «Որքա՛ն շնորհագարդեց քեզ Տէրը: Դու ինքդ ի՞նչ ես մտածում այդ նախասիրութեան մասին»:

*Մտածում եմ, որ Աստուծոյ Հոգին փչում է՝ ուր ուզում է<sup>2</sup>:*

12 ՅՈՒԼԻՍ

*Ձեռքերս ամբողջովին դատարկ են: Այն ամէնն՝ ինչ ունեմ, այն ամէնն՝ ինչ չաճում եմ, Եկեղեցու համար է եւ Հոգիների: Եթէ նոյնիսկ ութսուն տարի ապրէի, միշտ այսպէս աղքատ կը մնայի:*

«Եթէ հարկաւոր լինէր վերստին սկսել կեանքդ, ինչպէ՞ս կը վարուէիր»:

*Ինձ թւում է, որ կը վարուէի այնպէս՝ ինչպէս մինչեւ հիմա ապրել եմ:  
Պէտք է Աստուած բոլոր փափաքներս ի կատար ածի Երկնքում, որովհետեւ Երկրի վրայ երբեք չկատարեցի իմ կամքը:*

«Դու մեզ կը հայեա վերեւից, այնպէս չէ՞»:

*Ո՛չ, կը խոնարհուեմ:*

Գիշերուայ ընթացքում յորինեց այս կարճատօտ տները, Սուրբ Հաղորդութեանը պատրաստուելու համար:

*Դու, որ ճանաչում ես փոքրկութիւնս յետին,  
անպատուութիւն չես համարում խոնարհուելն իմ մօտ:  
Ե՛կ սիրտս, ձիւնափայլ Նշխար, Սէր իմ,  
Ե՛կ սիրտս, որ հիւժուում է առանց Քեզ:  
Ա՛հ, կ'ողբէի, որ ըստ բարութեանդ անվերջ  
Թողնէիր ինձ մեռնել սիրոյ մէջ, այս շնորհից յետոյ:  
Յիսո՛ւս, ընդունիր սիրոյս պաղատանքը,  
Ե՛կ, բնակուիր սրտիս մէջ:*

*Ձեմ ասում. «Եթէ դժուար է Կարմեղոսում ապրելը, քաղցր է այնտեղ մեռնելը»:  
Այլ. «Եթէ քաղցր է Կարմեղոսում ապրելը, առաւել եւս քաղցր է այնտեղ մեռնելը»:*

Կագորիչ գինի էին մատուցում իրեն:

*Ձեմ ուզում այլեւս երկրի գինին ... : Կամենում եմ խմել նոր գինին Հօրս Արքայութեան մէջ<sup>3</sup>:*

*Խնդրում եմ ձեզ ասել Աստուծոյ սիրոյ մի ներգործութիւն եւ կոչել Սրբերին առ ի բարեխօսութիւն ... : Նրանք բոլորն էլ իմ ազգականներն են այնտեղ վերեւում:*

<sup>1</sup> Այս բանաստեղծութիւնը, որ կոչւում է «Թէ ինչու եմ քեզ սիրում, Մարիամ», ամբողջովին տե՛ս՝ Յաւելուած Դ.:

<sup>2</sup> Յվհ 3, 8

<sup>3</sup> Մտթ 26, 29

Կրկին խօսում էր Սրբերի Հաղորդութեան մասին.

Կոյսերի հետ կը լինենք իբրեւ Կոյսեր, Հայրապետների հետ՝ իբրեւ Հայրապետներ, Մարտիրոսների հետ՝ իբրեւ Մարտիրոսներ, որովհետեւ բոլոր Սրբերն էլ մեր ազգականներն են: Բայց նրանք՝ ովքեր քայլած կը լինեն հոգեւոր մանկութեան ուղիով, միշտ կը պահպանեն իրենց մանկական հմայքը:

Մանկութիւնիցս ի վեր մարդասէրն Աստուած խոր համոզում ներշնչեց ինձ՝ թէ մեռնելու էի երիտասարդ հասակում:

Բարին Աստուած միշտ փափաք առաջացրեց ինձնում այն բանի, որ կամենում էր տալ ինձ:

Իր քոյրերին.

Մի՛ կարծէք՝ թէ երբ այլեւս Երկնքում լինեմ, միայն ուրախութիւններ էք ունենալու: Այս չէ, որ ունեցայ եւ այս չէ, որ կամեցայ ունենալ: Ընդհակառակն, թերեւս մեծ փորձեր կ'ունենաք, բայց ես կ'առաքեմ ձեզ լոյսեր, որոնց շնորհիւ կը գնահատէք ու կը սիրէք դրանք: Կը հասցնեմ ձեզ այն աստիճանի, որ կարողանաք իմ նման ասել. «Տէր, Դու ինձ ուրախութեամբ ես լցնում Բո բոլոր գործերով»:

Երջանկութեանս աղբիւրը յաւիտենական հոգեւոր վայելքի մասին մտածումը չէ. սա ինձ չի հրապուրում: Չեմ կարողանում երկար մտածել այն երանութեան մասին, որ սպասում է ինձ Երկնքում: Մի յոյս է միայն արագացնում սրտիս բաբախումները. սէրը, որ ընդունելու եմ ու բաշխելու: Մտածում եմ այն բոլոր բարիքների մասին, որ կարող եմ անել մահիցս յետոյ. մկրտել տալ մանուկներին, օգնել քահանաներին, առաքեալներին, ամբողջ Եկեղեցուն:

Այս երեկոյեան, հեռուից երաժշտութեան ձայն հասաւ ականջներիս, մտածեցի, որ շուտով լսելու եմ աննման եղանակներ: Բայց ուրախութեանս այս զգացումը վաղանցուկ եղաւ:

Եթէ մեծահարուստ լինէի, իմ համար անհնարին կը լինէր տեսնել մի աղքատ առանց իսկոյն եւեթ նրան շնորհելու հարստութեանս մի մասը: Նմանապէս, երբ ձեռքս է ընկնում հոգեւոր մի գանձ, զգալով, որ այդ նոյն պահին կան դժոխքի մատնուելու վտանգին ենթակայ հոգիներ, իրենց եմ տալիս այն ամէնը, որ ունեմ: Եւ դեռ չեմ գտել գէթ մի վայրկեան, որում կը կարողանայի ասել. «Այժմ աշխատում եմ իմ համար»:

Միշտ էլ հաճելի են եղել ինձ այն բաները, որ Աստուած տուել է ինձ, նոյնիսկ երբ դրանք թուացել են նուազ լաւ կամ նուազ գեղեցիկ՝ քան ուրիշներինը:

Միրոսս լի է Աստուծոյ կամքով, այնպէս՝ որ եթէ կամենում են այն ուրիշ բանով լցնել, դա չի կարողանում ներս թափանցել: Մի ոչնչութիւն է, որ առանց դժուարութեան սահում է ու անցնում, ինչպէս ձէթը, որ չի խառնուում ջրի հետ: Ներքուստ միշտ մնում եմ խոր խաղաղութեան մէջ, որը ոչինչ էլ չի կարող վրդովել:

Ապա սկսեց երկնային արտայայտութեամբ ու շեշտով արտասանել իր յորինած գովերգի այս տողերը.

**Յիշիր, որ սուրբ կամքդ**

**Հանգիստն է իմ, երջանկութիւնն իմ միակ:**

Յանձնում եմ ինձ ու նիրհում անվախ  
Ընդմէջ ձեռքերիդ, Փրկիչ իմ Աստուած:  
Եթէ Դու նոյնիսկ ննջես,  
Երբ դրսում մոնչում է փոթորիկն ահեղ,  
Ես կամենում եմ այս խոր անդորրում մնալ ընդմիշտ առյալէտ:  
Բայց երբ ննջում ես, Յիսուս,  
Պատրաստիր ինձ վերջին զարթումին<sup>1</sup>:

Նկատելով իր ձեռքերի չափազանց գիհարութիւնը, ասաց.

Ա՛հ, ինչպիսի ուրախութիւն է իմ համար տեսնելը, որ մաշուում եմ ու  
աւերւում:

15 ՅՈՒԼԻՍ

Ասում էի իրեն. «Թերես կը մեռնես վաղը, Կարմեղոսի Տիրամօր սօսին, Հաղորդութիւնից յետոյ»:

Ա՛հ ... պատշաճ չէր լինի իմ փոքրիկ ճանապարհին: Շեղուեմ ուղուցս, ուրեմն,  
մեռնելով՝ համար ... : Մեռնել սիրուց հիւժուած, Հաղորդութիւնից յետոյ:  
Չափազանց գեղեցիկ է իմ համար: Փոքրիկ հոգիները չեն կարողանայ նմանուել սրան  
... :

Պատմեց ինձ ճեպարեալ դէպքը, որի յիշատակը շնորհի նման տպաւորուել էր իր սրտում:

Քոյր Մարիան կամենում էր ծիսական թափօրի համար մոմեր վառել, բայց  
լուցկի չունէր: Վառ տեսնելով Սրբերի մասունքների առջեւ գտնուող ճրագը,  
մօտեցաւ: Աւա՛ղ, այն գրեթէ հանգած էր, պատրոյգի վրայ մի տկար կայծ էր միայն  
փայլում: Եւ սակայն, կարողացաւ վառել իր մոմը, իսկ նրանով՝ հասարակութեան  
միւս բոլոր մոմերը: Հետեւաբար, հանգելուն արդէն մօտ կանթեղն էր, որ այդ  
գեղեցիկ բոցերը ծնեց, որոնք էլ իրենց հերթին կարող էին ծնել անսահմանափակ  
քանակի ա՛յլ բոցեր, հրդեհել ամբողջ աշխարհը ... : Եւ այդ վիթխարի բռնկման  
համար, միեւնոյնն է, պարտական կը լինէինք առաջին փոքրիկ կանթեղին: Ինչպէ՞ս  
կը կարողանային գեղեցիկ բոցերը հպարտանալ, հրդեհն առաջացնելուց յետոյ, երբ կը  
գիտակցէին, որ կան եւ գործում են մի փոքրիկ կանթեղի շնորհիւ միայն: Ուրեմն,  
հարցնում եմ ինքս ինձ, ո՞վ կարող է իր գործերի համար փառաւորել իր սեփական  
անձը:

Նոյնն է նաեւ Սրբերի Հաղորդութեան պարագային: Յաճախ, առանց մեր  
իմանալու, շնորհներն ու լոյսերը, որ ընդունում ենք, մեզ տրւում են մի թաքնուած  
հոգու աղօթքներին իբրեւ պատասխան, որովհետեւ Տէրն ըստ իր բարութեան  
կամենում է, որ Սրբերը փոխադարձ կերպով միմեանց հաղորդեն շնորհը աղօթքի  
միջոցով, որպէսզի Երկնքում սիրեն միմեանց մեծ սիրով, շատ ու շատ աւելի մեծ՝  
քան երկրաբնակ ամենակատարեալ ընտանիքի սէրը: Քանի՛ անգամներ եմ մտածել,  
որ ստացածս բոլոր շնորհները թերեւս պարտաւոր եմ մի անձի, որ խնդրել է դրանք  
Տիրոջից իմ համար. եւ որ այդ անձին ճանաչելու եմ Երկնքում միայն:

Այո՛, փոքրիկ կանթեղը կարող է ծնել մեծամեծ լոյսեր ամբողջ Եկեղեցու  
գրկում: Ինչպէս, օրինակ, Հայրապետներ ու Մարտիրոսներ, որոնք անկասկած շատ ու

<sup>1</sup> Սրբուհու կողմից շարադրուած այս բանաստեղծութիւնը, որ կոչւում է «Յիշիր, Յիսուս»,  
տե՛ս՝ Յաւելուած Ե.:

չատ ակելի գերիվեր կը լինեն Երկնքում, քան այդ խոնարհ անծանօթ հոգին: Բայց կարո՞ղ ենք արդեօք ենթադրել, որ նրանց փառքը չի լինի նաեւ իրենը:

Երկնքում երբեք չեն հանդիպի անտարբեր հայեացքներ, որովհետեւ բոլոր ընտրեալներն էլ կը ճանաչեն միմեանց իբրեւ փոխադարձ պարտականներ այն շնորհների համար, որոնք հնարաւոր դարձրին իրենց աստուածապարգեւ թագերի հիւսումը:

## 17 ՅՈՒԼԻՍ

Չգում եմ, որ այլեւս մօտ եմ յաւիտենական հանգստին: Բայց ակելի զգում եմ, որ առաքելութիւնս սկսուելու վրայ է. առաքելութիւնս՝ որ կայանում է հոգիներին առ Աստուած առաջնորդելու մէջ, որպէսզի սիրեն Տիրոջն այնպէս՝ ինչպէս ես եմ Նրան սիրում: Հոգիներին տալու եմ իմ փոքրիկ ճանապարհը: Եթէ ողորմածն Աստուած ի կատար ածի փափաքներս, իմ դրախտը կ'անցկացնեմ երկրի վրայ, մինչեւ աշխարհի վախճանը: Այո՛, ուզում եմ Երկինքս երկրի վրայ բարեգործելով վայելել: Դա անհնարին չէ. երանակէտ հայեցողութեան մէջ ընկղմուած լինելով հանդերձ, Հրեշտակներն ամէն վայրկեան պահպանում են մեզ:

Չեմ կարողանայ վայելել հանգիստս, քանի դեռ փրկուելիք հոգիներ կան: Կը հանգստանամ ու կը ցնծամ, երբ Հրեշտակը կը հռչակի. «Ժամանակն այլեւս չկայ», որովհետեւ այնժամ ընտրեալների թիւը ամբողջական կը լինի եւ բոլորն էլ մտած կը լինեն Արքայութիւն: Սրա մասին մտածելիս, սիրտս բերկրանքով է լցւում:

Մի ուրիշ օր հարցրի. «Ի՞նչ ուղի ես կամենում ուսուցանել հոգիներին»: Պատասխանեց.

Մայր իմ, դա ճանապարհն է հոգեւոր մանկութեան, դա ուղին է Աստուծոյ հանդէպ վստահութեան եւ Նրա ձեռքերի մէջ անվերապահ ինքնայանձնումի: Կամենում եմ ուսուցանել նրանց այն փոքրիկ միջոցները, որոնք իմ դէպքում մեծ յաջողութիւն ունեցան: Կամենում եմ ասել նրանց, որ այստեղ ներքեւում անելիք միայն մի բան կայ. նուիրել Յիսուսին ծաղիկներ փոքրիկ զոհողութիւնների, եւ ընդունել Նրան քնքշանքով: Այսպէս ընդունեցի ես Իրեն, եւ սրա համար է՝ որ ես նոյնպէս այնքա՛ն լաւ եմ ընդունուելու Իր կողմից:

## 19 ՅՈՒԼԻՍ

Քիչ առաջ մեծ փափաք ունէի հարցնելու քոյր Մարիային, որ վերադառնում էր խօսարանից, ուր հանդիպել էր խոստովանահօրս հետ, թէ նա ի՞նչ կարծիքի էր դրութեանս մասին, իր վերջին այցելութիւնից յետոյ: Խորհում էի. «Թերեւս կ'օգնեն ինձ իր խօսքերը, կը մխիթարեն»: Բայց շուտով անդրադարձայ եւ ինքս ինձ ասացի. «Ո՛չ, սա պարզապէս հետաքրքրասիրութիւն է: Չեմ ուզում իմանալ ոչինչ»: Եւ քանի որ ողորմած Աստուծոյ կամքով քոյր Մարիան ինքն առաջինը չխօսեց դրա մասին ինքնաբերաբար, եզրակացրի՝ որ Տիրոջն իսկապէս հաճելի չէր փափաքս: Եւ, հետեւաբար, խուսափեցի զրոյցը կրկին այդ կողմ ուղղելու, վախենալով թէ քոյր Մարիան կը սկսէր խօսել դրա մասին գրեթէ ստիպուած: Իսկ այդպիսի դէպքում գոհ չէի լինի:

## 20 ՅՈՒԼԻՍ

«Ի՞նչ կ'անէիր, եթէ երեք քոյրերիցդ մէկը հիւանդ լիներ քո փոխարէն: Այցելութեան կը գալի՞ր հանգստեան պահերին»:

Ժպիտը դէմքիս կը զբօսնէի պարտէզում եւ լուրեր չէի ինդրի: Դա, սակայն, կ'անէի ամենայն պարզութեամբ, որպէսզի ոչ ոք չնկատէր զոհողութիւնս: Եթէ երբեմն էլ ինձ այցելութեան կանչէին հիւանդների բաժին, դիտաւորութիւնս կ'ուղղէի եւ այցի կը գնայի պարզապէս հիւանդին հաճոյք պատճառելու համար, երբե՛ք՝ ինքնագոհացման: Դա կ'անէի հիւանդի վրայ հրաւիրելու համար այն շնորհները, որոնք անկասկած չէի կարող ստանալ, եթէ գործէի անձնասիրութիւնից մղուած: Եւ ես ինքս էլ մեծ ուժ կը ստանայի ինքնամերժումիցս: Իսկ եթէ երբեմն էլ, տկարութեանս պատճառով, վարուէի առաջադրութեանս հակառակ, չէի վհատուի, կ'աշխատէի վճարել թերութիւններիս փոխարէն, զրկելով ինձ առաւել եւս. բայց ինչպէս միշտ՝ առանց յայտնի դարձնելու:

Երջանիկ եմ մեր Մօր<sup>1</sup> ձեռքերում մեռնելուս համար, որովհետեւ նա ներկայացնում է Տիրոջը: Եթէ ձեր ձեռքերում պատահէր, գուցէ բնական զգացումներ սպրդէին: Նախընտրում եմ, որ ամէն ինչ գերբնական լինի:

Ծա՛ր էր տառապել այդ Մեծաորոմիմ ձեռքի տակ:

Կամենում էիմք օգուտ քաղել իր վերջին օրերից եւ հարցեր էիմք ուղղում իրեն ամէն ինչի մասին:

Նեղում ու չարչարում են ինձ իրենց հարցերով: Միտքս է գալիս Սրբուհի Ժաննա դ'Արքը դատական ատենանի առաջ: Թուում է ինձ՝ թէ պատասխանում եմ միեւնոյն անկեղծութեամբ:

21 ՅՈՒԼԻՍ

Երբեք չեմ նմանուել Պիղատոսին, որ չկամեցաւ ունկնդրել ճշմարտութիւնը: Միշտ ասել եմ Տիրոջը. «Ա՛հ, Աստուած իմ, որքա՛ն եմ կամենում լսել Քեզ, աղաչում եմ պատասխանիր ինձ, երբ հարցնում եմ, թէ ”Ի՞նչ է ճշմարտութիւնը”: Տուր, որ իրողութիւնները տեսնեմ այնպէս՝ ինչպիսին են իրականում: Թող ոչինչ չչլացնի ու չհրապուրի ինձ»:

Ասացի իրեն. «Պէտք է երջանիկ եւ ուրախ լինես հոգիներին ուսուցանելիք սիրոյ եւ վստահութեան ճանապարհն ունենալուդ համար»: Պատասխանեց.

Կարեւոր չէ՝ թէ ես եմ ուսուցանում այս ճանապարհը հոգիներին, թէ մի ուրիշը: Կարեւորը ուսուցանելիքն է, ոչ թէ ուսուցանողը:

22 ՅՈՒԼԻՍ

Ուրիշ ոչինչ չեմ նուիրել մարդասէր Աստծուն, եթէ ոչ միայն՝ սէր: Հետեւաբար, Նա նոյնպէս կը փոխհատուցի ինձ սիրով:

23 ՅՈՒԼԻՍ

Ասացի. «Ծառ եւ տառապում եւ գուցէ դէռ անելի տառապես: Այս վախը մեզ շատ մեծ ցաւ է պատճառում»: Պատասխանեց.

Մենք, որ ընթանում ենք սիրոյ արահետներում, չպէտք է մտածենք այն հնարաւոր վշտակրութիւնների մասին, որոնք կարող են տեղի ունենալ ապագայում:

<sup>1</sup> Մայր Մարիամ Գոնձական:

Որովհետեւ հակառակ կերպով վարուելով կը թերանայինք վստահութեան մէջ եւ կը խառնուէինք ու կը միջամտէինք Աստուծոյ գործերին:

«Ի Քեզ անձինք մեր յուսացան»<sup>1</sup>: Մեր ընտանեկան մեծ տառապանքի պահերին որքա՛ն մեծ մխիթարութեամբ էի երգում այս խօսքերը, երբ ժամերգութիւնների ժամանակ ինձ էր հասնում այս տողը արտասանելու հերթը:

Մրգեր էին բերել իրեն, բայց չկարողացաւ ուտել: Վերցրեց դրանք մէկ առ մէկ, կարծես ինչ որ մէկին ճիւրաւսիրելով, եւ ասաց.

**Ահա հիւրասիրեցի Սուրբ Ընտանիքին: Սուրբ Յովսէփին ու Յիսուս Մանուկը ստացան մէկական դեղձ եւ երկուական սալոր: Իր մասն ունեցաւ նաեւ Սուրբ Կոյսը:**

Սեղանատանը միշտ մտածում էի՝ թէ ում նուիրէի կերակուրներս. քաղցրեղէնները վերապահուած էին Յիսուս Մանուկանը, սննդարարը՝ Սուրբ Յովսէփին, չէի մոռանում անշուշտ նաեւ Սուրբ Կոյսին ... : Բայց երբ ինչ որ մի բան պակասում էր ինձ, շատ աւելի գոհ էի լինում, որովհետեւ այդ զրկանքն իրօք նուիրում էի Սուրբ Ընտանիքին:

25 ՅՈՒՆԻՍ

Ասացի՝ թէ այլեւս կամենում էի իր մահը, որպէսզի չտեսնէի իրեն այդքան տառապելուց:

**Այսպիսի խօսքեր չպէտք է արտասանէք, Մայր իմ, որովհետեւ ճիշտ տառապանքն է, որ հաճելի է ինձ այս կեանքում:**

Գերէն մօտեցաւոր մի քիչ խաղող էր ուղարկել իրեն: Կերաւ մի փոքրիկ ողկոյց, ապա ասաց.

Ինչ համեղ խաղող է, բայց ինձ հաճելի չէ այն՝ ինչ բերում են ինձ ընտանիքիս կողմից ... : Մի ժամանակ, երբ մերոնք ծաղկեփնջեր էին բերում Յիսուս Մանուկան արձանը զարդարելու համար, չէի կամենում ընդունել դրանք առանց նախ վստահանալու, որ բերուել էին մեր Մօր հաւանութեամբ:

Հարցրի. «Ո՞ր է իմնա գող Բարեկամը, այլեւս չես խօսում Նրա մասին»: Պատասխանեց՝ ձեռքը կրծքի վրայ դնելով.

**Այստեղ է, սրտիս մէջ:**

Ասացի իրեն, որ մահն արտաքուստ շատ թախծալի է, եւ որ շատ կը տառապէի իրեն մտած տեսնելով: Պատասխանեց գորովալի ձայնով.

**Սուրբ Կոյսը նոյնպէս իր գրկում պահեց մեռած Յիսուսին, որն ամբողջովին կերպարանափոխուած էր ու արիւնհաշողախ: Այս տեսարանը ոչնչով նման չէ այն միւսին, որին ներկայ էք գտնուելու դուք: Ա՛հ, չգիտեմ՝ թէ նա ինչպէս դիմացաւ ... : Եթէ ինձ ներկայացնէին ձեզ այդպիսի վիճակում, ի՞նչ կ'անէիք ... : Պատասխանէք ինձ ... :**

Հոգեւոր առաջնորդութեանը վերաբերուող որոշ խորհուրդներ էի խնդրում իրենից.

**Պէտք է խուսափել սեփական անձը փնտռելուց, որովհետեւ այսպէս վարուելով՝ վերջում մեզ խոցուած սիրտ է միայն մնում, եւ այնժամ ամենայն**

<sup>1</sup> «Զքեզ Աստուած» (Te Deum) օրհներգից: Տե՛ս՝ Յաւելուած Զ.:

արդարացիութեամբ կարող ենք ասել. «Պարիսպների պահապանները վրայիցս քաշեցին հանեցին թիկնոցս, հարուածեցին ու վիրաւորեցին ինձ ... : Նրանց միջով անցնելուցս յետոյ միայն գտայ հոգուս Սիրելիին»<sup>1</sup>: Կարծում եմ, որ եթէ հոգին խոնարհաբար պարզապէս հարցնէր պահապաններին՝ թէ ուր էր իր Սիրելին, նրանք անկասկած ցոյց կը տային իրեն, բայց քանի որ կամեցաւ փայլել իր քաջագործութեամբ, շփոթութեան մատնուեց եւ, հետեւաբար, կորցրեց իր պարզութիւնը:

Խօսելով մի նորընծայումու մասին, որն աշխատում էր թաքցնել իր հոգեւոր ապրումներն ու փորձութիւնները.

**Առաքինութիւնը բնական փայլ ունի. հազիւ է այդ փայլը բացակայում, իսկոյն անդրադառնում եմ:**

27 ՅՈՒԼԻՍ

Միաբանակից բոլոր քոյրերը լուսցքատանն էին.

Ժամը մէկի մօտ, ինքս ինձ ասացի. «Բաւական յոգնած կը լինեն», եւ ողորմած Տիրոջը խնդրեցի մխիթարել ձեզ, որպէսզի աշխատանքը կատարուէր խաղաղութեան ու եղբայրսիրութեան մթնոլորտում: Ուրախացայ, տեսնելով ինձ հիւանդ ու անհանգիստ, որովհետեւ այդպիսով կարողացայ մասնակցել ձեր յոգնութեանը:

Երեկոյեան յիշեցրեց ինձ սբ. Յովհաննէս Խաչի խօսքերը.

«Պատուիր այս քաղցր հանդիպմանը խոչընդոտող քօղը»<sup>2</sup>: Այս խօսքերը միշտ վերագրել եմ սիրավառ մահուանը, որը կ'ուզէի ունենալ: Այո՛, սէրը ոչ թէ կը սպառի այս կեանքիս քօղը, այլ այն կը պատուի մի ակնթարթում:

Ի՛նչ մեծ փափաքով ու մխիթարութեամբ էի վանական կեանքիս սկզբից եւեթ մտովին կրկնում Սուրբ Յովհաննէս Խաչի այս միւս խօսքերը. «Կարեւորագոյն է, որ հոգին շատ հրահանգուի Աստծոյ սիրոյ մէջ, որպէսզի արագօրէն սպառուելով՝ կանգ չառնի այստեղ ներքեւում, այլ պատրաստակամօրէն հասնի դէմ առ դէմ տեսնելու իր Արարչին»<sup>3</sup>:

**Մահուանս համար ուրախանում եմ, որովհետեւ այն իմ նկատմամբ Աստծոյ կամքի արտայայտումն է:**

**Երբեք չեմ խնդրել Տիրոջը մեռնել երիտասարդ հասակում, հետեւաբար վստահ եմ, որ այս պահիս նա կատարում է միմիայն իր կամքը:**

Տառապում էր շնչառեղծութիւնից, եւ ես արտապայտում էի վշտակցութիւնս ու տխրութիւնս:

**Մի՛ վշտացէք, ո՛չ: Եթէ շնչառութիւնս գնալով աւելի ծանրանայ, Աստուած աւելի կը զօրացնի ինձ: Սիրում եմ իրեն: Երբեք չի լքի ինձ:**

<sup>1</sup> Երգ 5, 7; 3, 4

<sup>2</sup> SAN GIOVANNI DELLA CROCE, *Fiamma viva d'amore*, str. 1.

<sup>3</sup> SAN GIOVANNI DELLA CROCE, *Fiamma viva d'amore*, spieg. str. 1.

Միաբանակից քոյրերից մէկը զբօսանքի պահին ասել էր. «Չգիտեմ՝ թէ ինչու են քոյր Թերեզայի շուրջ խօսում իբրև մի սրբուհու մասին: Գործադրել է շատ առաքինութիւններ, ճիշտ է, բայց դրանք ձեռք չի բերել ի գին նուաստացման ու տառապանքի»: Կամեցայ իմանալ իր կարծիքը:

**Ես ... որ այնքա՛ն տառապել եմ գողտր մանկութիւնիցս ի վեր: Ա՛հ, որքան օգտակար է ինձ՝ իմանալ արարածների կարծիքը մահուանս պահին:**

Թու՛մ էր թէ հաճոյք կը պատճառէինք՝ մտացրումի մի առարկայ բերելով իրեն, մինչ ճիշտ հակառակը պատահեց: Վախն ունեցաւ՝ թէ տհաճութիւն պատճառեց միաբանակցին, որի համար էլ արտասուակի աչքերով ներողութիւն խնդրեց.

**Ներողութիւն եմ խնդրում քեզնից, շատ: Գործեցի բնութիւնիցս մղուած: Աղօթիր իմ համար:**

Եւ մի քիչ ասելի ուշ.

**Ա՛հ, որքան երջանիկ եմ ինձ անկատար տեսնելու համար, եւ որովհետեւ մահուանս պահին անսահմանօրէն մեծ կարիքն ունեմ Տիրոջ ողորմութեան:**

Մեր վախն էինք արտայայտում, թէ կարող էր մեռնել գիշերը: Պատասխանեց.

**Չեմ մեռնի գիշերը, հաւատացէք ինձ: Կամեցայ չմեռնել գիշերը, եւ Սուրբ Կոյսից սա խնդրեցի:**

Երեկոյեան դէմ ասաց ինձ մեղմ ու քաղցր ձայնով.

**Վերջապէս կը մեռնեմ: Երեք օր է արդէն, ճիշտ է, որ իսկապէս շատ եմ տառապում: Այս երեկոյ կարծես քաւարանում լինէի:**

**Յաճախ, երբ ի վիճակի եմ լինում, կրկնում եմ Աստծոյ Սիրոյն նուիրուելու աղօթքս:**

**Այն՝ ինչ նիւթ է հանգիստանում մեր նուաստացմանը, այն պահին՝ որում այն կրում ենք, հետագայում դառնում է մեր փառքը, այս կեանքից իսկ սկսած:**

**Վայելելու կարողութիւնը չունեմ, միշտ նկատել եմ սա: Բայց սրա փոխարէն՝ մեծ տաղանդն ունեմ տառապելու:**

**Մարմինս միշտ տաղտուկ է պատճառել ինձ, ներսումս ինչ որ մի բան հանգիստ չէր թողնում ... : Դեռ փոքրիկ փոքրիկ, կարմրում էի ամօթից:**

**Մի ծղօտ անգամ գետնից չէի վերցնի քաւարանից խուսափելու համար: Այն ամէնն՝ ինչ արել եմ, արել եմ մարդասէր Աստծուն հաճոյք պատճառելու եւ հոգիներ փրկելու համար:**

Շանճերը շատ էին անհանգստացնում իրեն, բայց այնուամենայնիւ՝ չէր կամենում սպանել նրանց:

Իմ միակ թշնամիներն են, եւ քանի որ Տէրը պատուիրում է ներել մեր անձնական թշնամիներին, գոհ եմ այդ պատուէրը գործի վերածելու առիթն ունենալու համար: Այս իսկ պատճառով, նրանց միշտ կեանք եմ շնորհում:

«Տաժանելի է հիւանդ ու մահամերձ վիճակում գտնուելը, այնպէս չէ՞»:

Ո՛չ, դեռ կարող եմ ասել Աստծուն, որ սիրում եմ Իրեն. եւ սա բաւական է ինձ:

Յոյց տալով իր բաժակը, որը լի էր անատր դառն դեղորայքով եւ որը, սակայն, ախորժելի ըմպելու տեսք ուներ, ասաց.

Տեսնո՞ւմ ես այս գաւաթը: Կարծես թէ լի է շատ համեղ ըմպելիով, մինչ իրականում սրանից աւելի դառն բան երբեք չեմ խմել: Լա՛ւ ուրեմն, այն իմ կեանքի պատկերն է: Ուրիշների աչքին կեանքս միշտ երեւացել է ամենաուրախ գոյներով ճոխացած, նրանց թուացել է՝ թէ ես մի շատ ախորժահամ ըմպելի եմ խմում, եւ սակայն՝ դառնութիւն է եղել միայն: Դառնութիւն եմ ասում, բայց ո՛չ, կեանքս դառն չի եղել, որովհետեւ կարողացել եմ ուրախութեան ու անուշութեան վերածել բոլոր դառնութիւնները:

Ուզո՞ւմ էք պատրաստել ինձ Վերջին Օծումն ընդունելուն: Աղօթեցէք մարդասէրն Աստծուն, որպէսզի կարողանամ լաւագոյնս ընդունել այն, որքան հնարաւոր է լաւ:

Խոստովանահայրս ասաց. «Օծումից յետոյ կը լինես ինչպէս նոր մկրտուած մանուկը»: Ապա Աստծոյ սիրոյ մասին միայն խօսեց: Ա՛հ, որքան յուզուած էի:

Հիւանդաց Օծումից յետոյ ընդունեց Ամենասուրբ Հաղորդութիւնը: Հագիւ էր վերջացրել գոհութեան աղօթքը, մի քանի միաբանակիցներ եկան իրեն սցելելու եւ իր հետ գրուցելու: Որոշ ժամանակ անց ասաց ինձ.

Որքան խանգարեցին ինձ գոհութեան աղօթքի ժամանակ: Բայց յիշեցի, որ երբ մեր Տէրը կամենում էր քաշուել մենութեան մէջ, ժողովուրդը գնում էր Իր ետեւից, եւ Նա նրանց ետ չէր ուղարկում: Աշխատեցի նմանուել Իրեն եւ սիրով ընդունել միաբանակիցներին:

Մայր իմ, եթէ կը կամենաք մահիցս յետոյ երախտագիտութիւնս յայտնել բժիշկ Դը Քոռնիէրին, որը խնամեց ինձ, իր համար մի պատկեր գծեցէք հետեւեալ մակագրութեամբ. «Ինչ արեցիք իմ այս փոքրիկ եղբայրներից մէկին, իմ համար արեցիք»<sup>1</sup>:

31 ՅՈՒԼԻՍ

Այո՛, ես երկրի վրայ գտայ երջանկութիւնն ու ուրախութիւնը, բայց միմիայն տառապանքի մէջ, որովհետեւ շատ տառապեցի այստեղ ներքեւում. հարկ է, որ հոգիներն իմանան սա:

Առաջին Հաղորդութեանս օրից սկսած, այն բանից յետոյ՝ ինչ Յիսուսին խնդրեցի իմ համար դառնութեան փոխել աշխարհի բոլոր միխթարութիւնները, զգում էի ինձնում տառապելու տեւական փափաք: Եւ սակայն, չէի մտածում՝ թէ

<sup>1</sup> Մտթ 25, 40

վշտակրուծիւնն իմ համար լինելու է ուրախութեան աղբիւր: Այս շնորհը տրուեց ինձ աւելի ուշ: Մինչ այդ, նման էր մոխրի տակ թաքնուած կայծին, կամ ծառի ծաղիկներին, որոնք իրենց ժամանակին դառնալու են պտուղներ: Բայց ծաղիկների թափուելը միայն տեսնելով, այսինքն՝ վշտերի տակ կքուած պահին արցունքներ հոսեցնելիս, ապշանքով ու տրամուլթեամբ ասում էի ինքս ինձ. «Թերեւս ուրիշ ոչինչ չեն լինելու, երբե՛ք, եթէ ոչ միայն՝ փափաքներ»:

## 1 ՕԳՈՍՏՈՍ

Այսօր խօսել այն մեծ շնորհի մասին, որ ստացել էր Խաչուած Յիսուսի պատկերներից մէկը դիտելիս, եւ որի մասին պատմում է նաեւ իր ինքնակենսագրութեան մէջ<sup>1</sup>: Ասաց ինձ այն՝ ինչ այնժամ ասել էր ինքն իրեն.

*Ա՛հ, չեմ կամենում, որ ի գուր հոսի այս անգին արիւնը: Կեանքս անցկացնելու եմ այն հոգիների համար հաւաքելով:*

Իր ինքնակենսագրութեան վերաբերեալ.

*Մայր իմ, երբ մեռնեմ, կենսագրութեանս մասին ոչ ոքի հետ չխօսէք, նախքան այն հրատարակելը: Խօսեցէք միմիայն մեր Մեծաւորուհի Մօր համաձայնութեամբ: Եթէ ա՛յլ կերպ վարուէք, սատանան գործի կը դնի մէկից աւելի խաբէութիւններ, Աստծոյ գործը ձախողելու համար ... մի գործ, որ շատ կարեւոր է:*

Իմ համար չեն կարող ասել այն՝ ինչ ասում էին մեր Մայր Սրբուհի Թերեզայի մասին. «Մեռնում է՝ որովհետեւ չի մեռնում»<sup>2</sup>: Այո՛, բնութիւնս ձգտում է Երկինք գնալու, բայց շնորհը մեծ տիրապետութիւն է հաստատել բնութեանս վրայ, եւ այժմ միայն սա եմ կրկնում Աստծուն.

*Ուզում եմ դեռ շատ ու շատ ապրել,  
Տէր, եթէ Քո կամքը սա է.  
Կամ հետեւել Քեզ դէպի Երկինք,  
Եթէ դա հաճոյք կը պատճառի Քեզ:  
Մէրը, երկնային Հայրենիքի այս կրակը,  
Սպառում է ինձ միշտ:  
Ի՞նչ կարեւորութիւն ունեն կեանքն ու մահը.  
Իմ միակ երջանկութիւնը Քեզ սիրելն է՝<sup>3</sup>*

Ամէն ինչ անցնում է այս մահկանացու աշխարհում, եւ փոքրիկ Թերեզան նոյնպէս անցնում է ... : Բայց նա կը վերադառնայ:

Մեծ ուրախութիւն եմ զգում ոչ միայն այն ժամանակ, երբ ուրիշներն են ինձ անկատար գտնում, այլ յատկապէս երբ ես ինքս եմ ինձ այդպիսին տեսնում: Այս ուրախութիւնն իմ համար աւելի քաղցր է՝ քան բոլոր գովասանքները, որոնք ձանձրացնում են ինձ:

<sup>1</sup> Հմմտ. Զեռագիր Ա, հատ. 134:

<sup>2</sup> Այսինքն՝ այնքան է տեսնում մեռնել, որ մեռնում է չմեռնելու վշտից: SANTA TERESA D'AVILA, *Opere*, Poesie, 1.

<sup>3</sup> Տե՛ս՝ Յաւելուած Է.:

«Ինչպէ՞ս կարողացար հասնել այս հաստատուն խաղաղութեանը, որ բնորոշ է քեզ»:

*Մոռացայ անձս եւ ջանացի երբեք չզբաղուել ինքս ինձնով:*

*Աղաչում եմ ձեզ, շատ աղօթեցէք խեղճ մահամերձների համար: Եթէ ըմբռնել կարողանայիք՝ թէ ինչե՛ր են կրում: Քիչ բան է բաւական, որ համբերութիւնը կորցնեն: Հարկաւոր է եղբայրսիրութիւն ցուցաբերել եւ ներողամիտ լինել, ով էլ լինի այդ մահամերձը ... :*

Մեզ՝ իր արիւնակից երեք քոյրերին.

*Մեծ ուշադրութիւն ունեցէք կանոնների հանդէպ: Խօսարանում ազգականների հետ հանդիպելուց յետոյ զրոյցի մի՛ բռնուէք ձեր միջեւ, որովհետեւ այլապէս կը լինէք ինչպէս աշխարհում, ուր ոչնչից չեն հրաժարւում:*

*Ա՛հ, ուսս որքան է ցաւում: Եթէ իմանայիք ... :*

Կամեցանք փափուկ բարձ դնել թիկունքին.

*Ո՛չ, մի՛ խլէք ինձնից այս փոքրիկ խաչս:*

Իրեն ասուած մի խօսքից յետոյ.

*Ո՛չ, իսկապէս չեմ համարում ինձ մի մեծ սրբուհի: Բայց մտածում եմ, որ Տէրը կամեցաւ հաղորդել ինձ այնպիսի շնորհներ, որոնք բարի ներգործութիւն ունեն ինչպէս իմ՝ այնպէս էլ այլոց համար:*

Իր համար բերել էին հասկերի մի փունջ: Վերցրեց ամենագեղեցիկներից մէկն ու ասաց.

*Մայր իմ, այս հասկը պատկերն է իմ հոգու: Ողորմածն Աստուած ճոխացրեց ինձ Իր շնորհներով, իմ եւ շատ ուրիշների համար ... : Ա՛հ, միշտ կամենում եմ կորանալ ու կբուել աստուածային պարգեւների ծանրութեան ներքոյ:*

Ապա, վախենալով հպարտ մտքեր արտայայտելուց, ասելացրեց.

*Ա՛հ, որքան կ'ուզէի նուաստացուած ու չարախօսուած լինել, տեսնելու համար՝ թէ ունե՞մ արդեօք սրտի խոնարհութիւն: Եւ սակայն, երբ մի ժամանակ ինձ նուաստացնում էին, շատ երջանիկ էի ինձ զգում ... : Այո՛, կարծում եմ՝ թէ խոնարհ եմ ... : Բարին Աստուած ցոյց է տալիս ինձ ճշմարտութիւնը. շատ լաւ եմ զգում, որ ամէն ինչ գալիս է միայն Իրենից:*

*Ա՛հ, քանիցս լաւ եմ զգում, որ կը կորցնէի արիութիւնս, եթէ հաւատք չունենայի, կամ ակնբեր ճիշտ՝ եթէ չսիրէի մարդասէրն Աստծուն:*

*Աղօթքի ընթացքում մի պահ քուն մտայ: Երագիս մէջ զինուորների պակաս կար՝ պատերազմի առաքելու համար: Դուք ասացիք. «Ուղարկենք Յիսուս Մանկան*

քոյր Թերեզային»։ Իսկ ես պատասխանեցի՝ թէ կը նախընտրէի մարտնչել յանուն սուրբ գաղափարականի մղուող պատերազմում։ Այնուհանդերձ, վերջիվերջոյ մեկնեցի։

Ապա անլացրեց աշխոյժ ոգետրուածութեամբ.

Ա՛հ, Մայր իմ, որքան երջանիկ կը լինէի, օրինակ, եթէ պատերազմէի խաչակիրներէի դարում, կամ ակելի ուշ՝ պայքարէի ուղղափառ հաւատքի թշնամիներէի դէմ։ Ա՛հ ո՛չ, չէի վախենայ հրացաններէ կրակոցներէից կամ խարոյկ բարձրանալուց։  
Հնարաւոր բան է, որ ես անկողնում պառկած մեռնեմ։

## 5 ՕԳՈՍՏՈՍ

Կարեկցանքով էինք խօսում մեր Միաբանութեան անդամների մասին, որովհետեւ ծանր զգեստներ ենք հագնում նաեւ ամսուուայ տաքին։

Ա՛հ, Երկնքում, Երկնքում։ Մարդասէրն Աստուած անշուշտ հաշուի կ'առնի երկրի վրայ յանուն Իր սիրոյ ծանր զգեստներ հագած լինելու հանգամանքը։

Քոյր Մարիան ասաց, որ նրա մահուան պահին հրեշտակները կ'ընկերակցեն մեր Տիրոջը, եւ որ նա կը տեսնի նրանց շողարձակ ու շատ գեղեցիկ լինելը։ Պատասխանեց.

Պատկերացումներն ինձ ոչնչով չեն օգնում, միայն ճշմարտութեամբ եմ կարողանում սնուել։ Այս իսկ պատճառով, երբեք չեմ կամեցել տեսիլքներ ունենալ։ Երկինքն ու հրեշտակները երկրի վրայ անհնարին է տեսնել այնպէս՝ ինչպիսին են իրականում։ Նախընտրում եմ մահիցս յետոյ սպասել։

Կրկնում եմ Յոբի նման. «Արշալոյսին յուսով եմ չհասնել մթնշաղին, իսկ երեկոյեան յուսով եմ կրկին չտեսնել առաւօտը»<sup>1</sup>։

Իր անկողնի մօտ տեղադրել էինք Սուրբ Դէմքը պատկերող նկարներից մէկը, որը նա շատ էր սիրում, յաջորդ օրը՝ Օգոստ. 6ին Պաշտօնակերպութիւնը տօնելու համար։ Ասաց ինձ.

Այո՛, մեր Տէրը ճիշտ է վարուել աչքերը խոնարհելով։ Քանի որ աչքերը հոգու հայելին են, եթէ կարողանայինք հայել Իր հոգուն, կը մեռնէինք ուրախութեան յորդումից։

Ա՛հ, այս Սուրբ Դէմքը, որքա՛ն օգնեց ինձ կեանքիս ընթացքում։ Երբ շարադրում էի «Ապրել սիրելով» բանաստեղծութիւնս, ներշնչեց ինձ եւ այն թղթին յանձնեցի առանց որեւէ դժուարութեան։ Պարզապէս յիշողութեամբ, երեք քառորդ գիշերուայ լուռութեան պահին, գրեցի այն տասնհինգ տները, որ յօրինել էի օրուայ ընթացքում։ Այդ օրը սեղանատուն գնալիս դեռ նոր էի մտայղացել այս տունը.

«Ապրել ըստ սիրոյ՝ նշանակում է չորացնել արնածոր Դէմքդ եւ ներում աղերսել մեղաւորների համար ... »։

Իր պատկերի առջեւից անցնելիս կրկնում էի այս խօսքերը մեծ սիրով։ Դիտելով Նրան՝ չէի կարողանում գսպել արցունքներս։

Վերոյիշեալ պատկերը գտնում է եկեղեցուց դէպի սեղանատուն տանող սրահում։

Ես այի մարդարէի այս խօսքերը. «Ո՞վ հաւատաց խօսքերիդ, Տէր, ... նրանք անշուք են ու անզարդ ... »<sup>2</sup>, հիմքը կազմեցին Սուրբ Դէմքի հանդէպ ունեցածս

<sup>1</sup> Յոբ 7, 4

<sup>2</sup> Հմմտ. Ես 53, 1-2

ջերմեռանդութեան, կամ աւելի ճիշտ՝ իմ ամբողջ աստուածապաշտութեան: Ես նոյնպէս կամենում էի զուրկ լինել փայլից ու արտաքին գեղեցկութիւններից, միայնակ՝ խաղողը հնձանում տրորելիս<sup>1</sup>, անծանօթ՝ բոլոր արարածներին:

## 6 ՕԳՈՍՏՈՍ

Յուսացել էր մեռնել երեկոյեան եւ հայեացքը մէկ պահ անգամ չէր փեռացրել Սուրբ Դեմքի պատկերից: Առաւօտեան ասաց.

*Սպասեցի Յիսուսին ամբողջ գիշեր: Ետ մղեցի բազում փորձութիւններ ... : Ա՛հ, հաւատքի քանի՛ քանի՛ ներգործութիւններ կատարեցի ... : Կարող եմ արդարեւ ասել. «Դէպի աջ ու ձախ նայեցի եւ տեսայ, որ ոչ ոք չի ճանաչում ինձ»<sup>2</sup>, տեսայ՝ որ ոչ ոք չի ճանաչում մահուանս ժամը ... :*

Ապա հայեացքն ուղղեց Սուրբ Կոյսի արձանին ու սկսեց մեղմօրէն երգել.

*Ե՞րբ է գալու, Մայր իմ անուշիկ,  
Ե՞րբ է գալու օրն այն գեղեցիկ,  
Երբ երկրային այս աքսորից  
Կ'անցնեմ բնակավայրն իմ յաւերժ բերկրալից:*

Ննջեցեալներին ի նպաստ կատարուող ժամերգութեան մասին, որից իրեն ազատել էինք իր փրկանդութեան պատճառով, ասաց.

*Ձեմ կարող կռթնել ոչնչի վրայ, վստահութիւնս չեմ կարող սնուցել գործերիցս ոչ մէկով: Օրինակ, չեմ կարող ասել՝ թէ ամբողջ ժամերգութիւնս կատարել եմ հանգուցեալ հոգիների դիտաւորութեամբ: Բայց այս աղքատութեանս գիտակցութիւնն իմ համար եղել է մի իրական լոյս: Ամբողջ կեանքիս ընթացքում համոզուած եմ եղել, որ Տիրոջը չեմ կարողացել վճարել պարտքերիցս եւ ոչ իսկ մէկը: Եւ դա եղել է իմ համար իրական հարստութիւն եւ ուժ ... երբ ընդունել եմ ու խոստովանել: Այդ պահին այս աղօթքը կատարեցի. «Աստուած իմ, պաղատում եմ, Դո՛ւ վճարիր ննջեցեալ հոգիների հանդէպ ունեցածս պարտքը: Բայց վճարիր իբրեւ Աստուած, որպէսզի դա անհունօրէն աւելի լաւ լինի՝ քան եթէ ես ինքս կատարած լինէի այդ պարտականութիւնս»: Մեծ քաղցրութեամբ յիշեցի Սուրբ Յովհաննէս Խաչի խօսքերը. «Նա ամէն պարտք վճարում է»<sup>3</sup>: Այս տաղը միշտ վերագրել եմ սիրոյն: Զգում եմ, որ նմանօրինակ շնորհն անհնարին է փոխհատուցել: Այնքա՛ն մեծ խաղաղութիւն ենք զգում մեզ բացարձակ կերպով աղքատ տեսնելու, միմիայն Աստծոյ ողորմութեանը վստահելու դէպքում:*

Որոշ հարցերի վերաբերեալ, որոնք վստահում էի իրեն եւ որոնք իրեն վիշտ էին պատճառում, թախծալի ձայնով ասաց.

*Ա՛հ, որքան սակաւաթիւ են կատարեալ միանձնուհիները, այսինքն այնպիսիք՝ որոնք իրենց գործերը չեն կատարում անհոգութեամբ, եւ չեն ասում. «Սա իմ պարտականութիւնը չէ: Մեծագոյն չարիք չէ այստեղ այնտեղ մի քիչ գրուցելը, մի*

<sup>1</sup> Ես 63, 3

<sup>2</sup> Սղմ 141, 5

<sup>3</sup> SAN GIOVANNI DELLA CROCE, *Fiamma viva d'amore*, str. 2.

փոքրիկ մխիթարութիւն շնորհելը սեփական անձին ... »: Որքան հագուադէպ են այնպիսիները, որոնք ամէն բան անում են հնարաւոր լաւագոյն կերպով: Եւ սակայն, ճիշտ սրանք են ամենաերջանիկները, որովհետեւ հոգու վրայ այնքա՛ն բարերար ազդեցութիւն ունի լուծիւնը: Այն առաջն է առնում եղբայրսիրութեան դէմ գործուող բազում թերութիւնների, ինչպէս նաեւ ամէն տեսակ տհաճութիւնների: Խօսում եմ յատկապէս լուծեան մասին, որովհետեւ ամէնից շատ այս կէտում են թերանում:

Խօսում էր ժամերգութիւնների մասին.

Որքան հպարտ էի, երբ ինձ էր վիճակուում բարձրաձայն կարդալ աղօթքները դասի կենտրոնում: Որովհետեւ մտածում էի, որ քահանաները այդ նոյն աղօթքներն ասում են Պատարագի ժամանակ, եւ որ ես նոյնպէս այդ օրերին իրաւունք էի ստանում բարձրաձայն խօսելու Ամենասուրբ Հաղորդութեան առաջ, կատարելու մաղթանքները, օրհնութիւնները, եւ կարդալու Աւետարանը:

Կարող եմ ասել, որ ժամերգութիւնը եղել է միաժամանակ ե՛ւ երջանկութիւնս ե՛ւ մարտիրոսութիւնս, որովհետեւ մեծապէս փափաքում էի այն լաւագոյնս ասել, առանց որեւէ սխալի: Ներողամտութեամբ եմ նայում այն քոյրերին, որոնք ինչ ինչ մոռացումներ կամ սխալներ են կատարում հասարակաց աղօթքների ընթացքում: Երբեմն, մինչ պարտաւոր էի ինչ որ մի բան ասել եւ նախապէս էլ մտադրուել էի կենտրոնանալ ու չչեղուել, մնացել եմ լուռ ու մունջ, եւ այն էլ՝ մի ամբողջովին ակամայ ցրուածութեան պատճառով:

Չեմ կարծում, սակայն, թէ հնարաւոր է իմ ունեցածից աւելի մեծ փափաք ունենալ՝ կատարեալ կերպով արտասանելու ժամերգութիւնները եւ մասնակցելու դասի երգեցողութեանը:

Երեկոյեան հարցրեցի իրեմ՝ թէ ի՞նչ էր հասկանում ասելով «միշտ մանուկ մնալ Աստուծոյ սուսջ»: Պատասխանեց.

Հոգեւոր մանկութիւնը անձնական ոչնչութեան ճանաչումն է, ամէն ինչ ողորմած Աստուծոյ ձեռքերից յուսալը, ինչպէս փոքրիկներն են ամէն բան սպասում իրենց հայրիկից: Հոգեւոր մանկութիւնը դա ոչնչով չմտահոգուելն է, հարստութիւններ չդիզելը: Նոյնիսկ աղքատները ապահովում են իրենց երեխաների կենսական կարիքները, բայց հազիւ են վերջիններս չափահաս դառնում, ծնողները չեն կամենում այլեւս կերակրել նրանց եւ ասում են. «Աշխատիր հիմա, այսուհետեւ կարող ես ինքնաբաւ լինել»: Այսօրինակ խօսքեր չլսելու համար է, որ ես չկամեցայ մեծանալ. զգալով ինձ անկարող՝ շահելու կեանքը, Երկնքի յաւիտենական կեանքը: Այս իսկ պատճառով, միշտ մնացել եմ փոքրիկ, զբաղուել եմ միայն ծաղիկներ հաւաքելով, ծաղիկներ սիրոյ ու գոհողութեան, եւ դրանք նուիրել եմ Տիրոջը, Իրեն հաճոյք պատճառելու համար:

Լինել մանուկ՝ նշանակում է նաեւ ինքներս մեզ չվերագրել այն առաքինութիւնները, որ գործադրում ենք. նշանակում է համարել մեզ անկարող որեւէ բարեգործութեան, եւ հակառակ այս բոլորի՝ խոստովանել, որ Աստուած ինքն է, ըստ Իր անբաւ ողորմութեան, առաքինութեան գանձը դնում Իր մանկան փերի մէջ, որպէսզի վերջինս այն գործածի հարկաւոր դէպքերում, ըստ պահանջի. գանձը, սակայն, միշտ Աստուծունն է: Եւ վերջապէս, լինել մանուկ՝ նշանակում է չվհաստուել ի տես սեփական սխալների, որովհետեւ մանուկներն յաճախ են ընկնում, բայց չեն վնասուում, իրենց նուազագոյն հասակի պատճառով:

Ա՛հ, Աստուած որքան քիչ է սիրուած երկրի վրայ, նաեւ քահանաների ու կրօնաւորների կողմից: Ո՛չ, մեր Տէրը շատ սիրուած չէ ... :

Մայր իմ, եթէ ամենափոքր անհաւատարմութիւնն անգամ գործէի, զգում եմ, որ կը վճարէի անհաւոր խռովքներով եւ չէի կարողանայ խաղաղ սրտով ընդունել մահը: Այս իսկ պատճառով, չեմ դադարում մարդասէր Աստուծոն կրկնելուց. «Աստուած իմ, աղաչում եմ Քեզ, փրկիր ինձ անհաւատարիմ գտնուելու դժբախտութիւնից»:

«Ի՞նչ անհաւատարմութեան մասին ես խօսում»:

Կամովին փայփայուած հպարտ մտածումների: Եթէ, օրինակի համար, ասէի ինքս ինձ. «Ձեռք եմ բերել անհաւատ անաւորութիւնը, վստահ եմ՝ թէ կարող եմ այն գործադրել»: Որովհետեւ սա կը նշանակէր կռթնել սեփական ուժերին. իսկ այդպէս վարուելով՝ ենթարկում եմ մեզ գահավիժելու վտանգին: Եթէ ասէի. «Աստուած իմ, Դու գիտես, որ Քեզ շա՛տ շա՛տ եմ սիրում, եւ երբեք հաւանութիւն չեմ տայ հաւատքի դէմ ուղղուած մտածումներին», փորձութիւններս այնքան բուռն կը դառնային, որ ապահովաբար կ'ընկճուէի կ'ընկնէի: Խոնարհութեամբ ընթանալիս, մինչդեռ, իրաւունքը կ'ունենայի, առանց Տիրոջը վշտացնելու, մի քանի անխելքութիւններ գործելու մինչեւ մահուանս պահը: Նայէք մանուկներին. չեն դադարում կոտրել, պատռել, թաւալուել, շատ սիրելով հանդերձ իրենց հօրն ու մօրը: Ա՛հ, երբ ես ընկնում եմ այսպէս՝ ինչպէս մանուկը, հնարաւորութիւնն եմ ստանում մատներովս հպուելու անձիս ոչնչութեանը, շօշափելու իմ անուժութիւնը, ասելու ինքս ինձ. «Ի՞նչ էի արդեօք լինելու, ի՞նչ էի անելու, եթէ յենուէի իմ ուժերի վրայ»:

Լաւ եմ հասկանում Պետրոս Առաքեալի անկման պատճառը: Խեղճ Պետրոս Առաքեալ: Վստահում էր իր անձնական ուժերին, Աստուծոյ զօրութեանը կռթնելու փոխարէն: Վստահ եմ, որ եթէ խոնարհաբար ասէր Յիսուսին. «Խնդրում եմ, շնորհիր ինձ Քեզ մինչեւ մահ հետեւելու քաջութիւնը», այդ քաջութիւնն իրեն իսկոյն կը տրուէր: Ինչպէս նաեւ վստահ եմ, որ մեր Տէրը Առաքեալներին աւելի ոչինչ չէր սովորեցնում իր ուսուցումներով եւ իր տեսանելի ներկայութեամբ, քան այն՝ որ սովորեցնում է մեզ իր շնորհի ներշնչումներով: Կարող էր Պետրոս Առաքեալին ասել. «Խնդիր ինձնից ուժը, ի կատար ածելու այն՝ ինչ կամենում ես»: Բայց ո՛չ, քանի որ նրան սահմանել էր հովուելու ամբողջ Եկեղեցին, որը լի է մեղաւորներով, կամենում էր, որ նա իր իսկ անձի վրայ զգար՝ թէ ինչի է ընդունակ մարդն առանց Աստուծոյ օգնութեան: Այս պատճառով է, որ նրա անկումից առաջ, մեր Տէրն իրեն ասել էր. «Երբ կրկին ինքդ քո մէջ վերադառնաս, հաստատիր եղբայրներին»<sup>1</sup>, այսինքն՝ պատմիր նրանց քո մեղքի պատմութիւնը, ցոյց տուր մարդկային ուժերի տկարութիւնը, որի փորձառութիւնը դու ինքդ ունեցար:

Ասացի իրեն, որ մի օր աշխատելու էին արժեքատրելի իր առաքինութիւնները: Պատասխանեց.

Տիրոջն է միայն, որ պէտք է արժէք ընծայել, որովհետեւ արժեւորելու ոչինչ չկայ իմ ոչնչութեան մէջ:

Դիտում էր երկինքը, երբ քոյր Մարիան ասաց. «Որքան մեծ սիրով ես դիտում երկինքը»: Որոշ ժամանակ անց, ասաց ինձ.

<sup>1</sup> Հմմտ. Ղկա 22, 32

Ա՛հ, կարծում է՝ թէ իրական Երկնքի մասին խորհելով եմ դիտում երկնակամարը: Բայց ոչ, պարզապէս զմայլում եմ նիւթական երկնքով, միւսն իմ առջեւ փակ է առաւել քան երբեք: Այսուամենայնիւ, կարող եմ ասել հոգեւոր մեծ միտիթարութեամբ, որ այժմ սիրոյ համար եմ դիտում երկինքը, ի սէր Աստծոյ, որովհետեւ հոգիս ամբողջովին անձնատուր է Սիրոյն, բոլոր գործերս, նոյնիսկ ամենաանտարբերները, այն ամէնը՝ որ անում եմ, շարժումներ, հայեացքներ ... դրոշմուած են այս աստուածային կնիքով:

Այսօր մտածում էի անցեալիս մասին, այն քաջութեան, որ գործի էի դրել մի ժամանակ, Սուրբ Ծննդեան գիշերը ... եւ Յուդիթին ուղղուած գովքը վերակենդանացաւ յիշողութեանս մէջ. «Գործեցիր առնական քաջութեամբ եւ սիրտդ է՛լ աւելի զօրացաւ»<sup>1</sup>: Շատ անձեր կան, որ ասում են՝ թէ որոշ զոհողութիւններ կատարելու համար հարկաւոր ուժը չունեն: Թող ջանք գործադրեն: Աստուած երբեք չի մերժում առաջին շնորհը, որը գործելու քաջութիւն է տալիս. ապա հետզհետէ սիրտն ամրապնդւում է եւ սկսում առաջ ընթանալ յաղթանակից յաղթանակ:

## 9 ՕԳՈՍՏՈՍ

Իր մասին խօսելով, ասացի. «Մեր մարտիկը ուժաթափ է»: Պատասխանեց.

Ես երկրային զէնքերով պատերազմող զինուոր չեմ, այլ՝ Հոգու սուսերով, որ Աստծոյ խօսքն է<sup>2</sup>: Հետեւաբար, հիւանդութիւնն ինձ ուժաթափ չարեց, եւ երէկ երեկոյեան իսկ գործածեցի այս սուսերս նորընծայուհիներից մէկի հետ զրուցելիս ... : Ասել եմ ձեզ, որ մեռնելու եմ զէնքերը ձեռքիս:

Միաբանակիցներից մէկն ասաց. «Դու մի սրբոյնի ես»:

Ո՛չ, սրբուհի չեմ, երբեք չեմ կատարել Սրբերի գործերը: Մի փոքրիկ հոգի եմ, որին Աստուած լիացրել է Իր շնորհներով: Ասածս ճիշտ է, Երկնքում կը տեսնէք:

## 10 ՕԳՈՍՏՈՍ

Ասում էինք, որ կատարեալ սիրոյն հասած հոգիները, ինչպիսին էր ինքը, կարող են առանց վտանգի տեսնել իրենց գերբնական գեղեցկութիւնը: Պատասխանեց.

Ի՞նչ գեղեցկութեան մասին էք խօսում: Ես ամենեւին չեմ տեսնում ինձնում ոչ մի գեղեցկութիւն: Տեսնում եմ միայն այն շնորհները, որ ստացել եմ Աստծուց:

Յոյց էինք տալիս իրեն ժամնա դ՛Արքի նկարներից մէկը, ուր սրբոյնն պատկերուած էր բանտում: Ասաց.

Սրբերն ինձ նոյնպէս խրախուսում են իմ բանտում: Ասում են. «Քանի դեռ կապանքների մէջ ես, չես կարող առաքելութիւնդ կատարել: Բայց մի քիչ աւելի ուշ, մահիցդ յետոյ, կը գայ ժամանակը առատ նուաճումների»:

Մտածում եմ Սուրբ Իգնատիոս Անտիոքացու խօսքերի մասին. «Հարկ է, որ ես նոյնպէս տառապանքից մանրուեմ, Աստծոյ ցորեն դառնալու համար»:

<sup>1</sup> Յգթ 15, 11

<sup>2</sup> Եփս 6, 17

Խօսում էինք Երկնքի, մեր Տիրոջ և Սուրբ Կոչսի մասին, որոնք Երկնքում են հոգիով ու մարմնով:  
Խոր հառաչանք դուրս փախաւ շուրթերից.

**Ա՛հ ... :**

«Այս հառաչանքդ իմ համար խօսուն փաստ է ներքին տառապանքներիդ ... »:

*Այո՛ ... հնարաւոր է շատ ու շատ սիրել Աստծուն եւ Սուրբ Կոչսին, այսօրինակ մտածումներից չարչարուելով հանդերձ ... : Բայց ես դրանց վրայ ուշադրութիւն չեմ դարձնում:*

## 11 ՕԳՈՍՏՈՍ

*Չէի կամենայ խնդրել Տիրոջից աւելի մեծ տառապանքներ: Եթէ աւելացնէր Ինքը, կը կրէի ուրախութեամբ, որովհետեւ կը գային Իրենից: Մինչդեռ եթէ ես ինքս խնդրէի դրանք, կը լինէին իմ տառապանքները, պարտաւոր կը լինէի կրել իմ ուժերով: Իսկ ես, մենակ, երբեք ոչինչ չեմ կարողացել անել:*

Խօսելով Սուրբ Կոչս Աստուածածնի մասին.

*Ճիշտն ասած՝ մեզնից նուազ երջանիկ է, որովհետեւ մի Սուրբ Կոչս չունի, որին կարող կը լինէր սիրել:*

*Յաճախ եմ խնդրանքներ ուղղում Սրբերին առանց լսուելու. բայց որքան աւելի են խոսւ ձեւանում իմ ձայնին, այնքան աւելի եմ իրենց սիրում:*

Ինչո՞ւ:

*Որովհետեւ շատ աւելի փափաքեցի երկրի վրայ չտեսնել Աստծուն ու Սրբերին եւ մնալ հաւատքի մթութեան մէջ, քան ուրիշներ, որոնք կամենում են ամէն բան տեսնել ու ամէն բան հասկանալ:*

## 12 ՕԳՈՍՏՈՍ

*Հասկի վրայ կատարածս խորհրդածութիւնից յետոյ շատ ցածր համարում ունեմ իմ անձի նկատմամբ: Բայց որքա՛ն մեծ է ահա այս նոր շնորհը, որ ստացայ այսօր առաւօտեան, այն պահին, երբ քահանան սկսեց արտասանել «Խոստովանիմ» աղօթքը, Սուրբ Հաղորդութիւնը տալուց առաջ: Տեսնում էի Յիսուսին, որ մօտենում էր ինձ միանալու, եւ լսում էի այնքա՛ն անհրաժեշտ խոստովանութիւնը. «Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամենակալի, Սրբուհւոյ Աստուածածնի եւ առաջի ամենայն Սրբոց, քանզի մեղայ յոյժ»: Ա՛հ այո՛, ասում էի ինքս ինձ, ճիշտ են վարում այս պահին Աստծուց եւ բոլոր Սրբերից իմ համար ներում հայցելով: Որքա՛ն հարկաւոր է այս խոնարհութիւնը: Ձգում էի ինձ, ինչպէս մաքսաւորը, մեծ մեղաւոր: Աստուած աչքերիս առաջ պատկերւում էր այնքա՛ն բարեգութ: Քանիցս յուզիչ էր երկնային ամբողջ արքունիքին դիմելը եւ նրանց միջնորդութեամբ Աստծուց ներում գտնելը իմ մեղքերի համար ... : Մեծ դժուարութեամբ զսպեցի արցունքներս, եւ երբ Սուրբ Նշխարը հպուեց շրթունքներիս, սիրտս շատ յուզուեց ... : Որքան զարմանալի է այս բոլորը «Խոստովանիմ»ի ժամանակ զգալը: Կարծում եմ՝ թէ դրա պատճառը ներկայ հոգեվիճակս է. զգում եմ ինձ այնքա՛ն թշուառ ու ողորմելի: Վստահութիւնս,*

այնուամենայնիւ, չի նուազում. ընդհակառակն: Եւ որոշ առումով «ողորմելի» բառը տեղին չէ, որովհետեւ ճոխացել եմ աստուածային բոլոր գանձերով. բայց ճիշտ սրա համար է, որ խոնարհւում եմ աւելի: Երբ խորհում եմ այն բոլոր շնորհների մասին, որ մարդասէրն Աստուած պարգեւել է ինձ, հագիւ եմ ինձ զսպում երախտագիտութեան արցունքները անդադար հոսեցնելուց: Ինձ թւում է, որ այս առաւօտեան թափածս արցունքները կատարեալ զղջումի արցունքներ էին: Անհնարին է, որ մարդ ինքնըստինքեան ունենայ այս զգացումները: Սուրբ Հոգին է տալիս դրանք. փչում է՝ ուր ուզում է<sup>1</sup>:

### 13 ՕԳՈՍՏՈՍ

Խօսում էի իր ֆետ սպն Աերթին լոյսերի մասին, որ երբեմն ունենում ենք երկնային իրականութիւնների վերաբերեալ: Ասաց.

*Իմ պարագային, ուրիշ լոյս չունեմ, եթէ ոչ միայն՝ իմ փոքրիկ ոչնչութիւնս տեսնելու համար հարկաւոր լոյսը: Բայց սա ինձ աւելի բարիք է անում, քան հաւատքի խորհրդաւոր հարցերը պարզաբանող լոյսերը:*

### 14 ՕԳՈՍՏՈՍ

Սա մի վշտալի օր էր, թե՛ մարմնի եւ թե՛ սրտի համար: Երեկոյեան ասացի իրեն. «Այսօր շատ տառապեցիր»:

*Այո՛, բայց սիրով եմ համբերում նեղութիւններին: Սիրում եմ այն ամէնը, որ տալիս է ինձ Աստուած:*

### 15 ՕԳՈՍՏՈՍ

Իրեն էի վերագրում աստուածային սիրոյ մէջ սպառուած հոգիների մահուան մասին սբ. Յովնաննէս Խաչի խօսքերը<sup>1</sup>: Հառաչեց ու ասաց.

*Հարկ է ասել, որ հոգուս խորքում միայն բերկրանք ու յափշտակութիւն եմ զգում: Բայց սա շատ չի քաջալերի հոգիներին, եթէ ենթադրեն՝ թէ ես շատ չեմ տառապել:*

Տառապում էր շնչափողոցներից:

*Զգիտեմ՝ թէ ինչ է լինելու վերջս:*

«Քեզ մտահոգո՞ւմ է այդ միտքը»:

*Ա՛հ ո՛չ ... :*

*Երէկ երեկոյեան Սուրբ Կոյսին խնդրեցի որոշ ժամանակով դադարեցնել հագս, որպէսզի քոյր ժընըվիեւը կարողանար քնել: Բայց անմիջապէս աւելացրի. «Եթէ խնդրանքս չկատարես, քեզ է՛լ աւելի կը սիրեմ»:*

<sup>1</sup> Յվհ 3, 8

Աստուած ինձ զօրացնում է տառապանքներիս համաչափ: Զգում եմ, որ այս պահիս ակելին չէի կարողանայ կրել: Բայց նաեւ չեմ վախենում, որովհետեւ եթէ ակելանան վշտերը, կ'ակելանայ նաեւ զօրութիւնը:

## 16 ՕԳՈՍՏՈՍ

Այնքան էր տկարացել ու ընկճուել, որ այլեւս չէր կարողանում խօսել:

Չեմ ... կարողանում խօսել ... այլեւս ... եւ ոչ իսկ ձեր հետ ... : Ա՛հ, եթէ իմանայիք ... : Եթէ չսիրէի մարդասէր Աստծուն ... :

Խօսում էինք հրեշտակների մասին:

Չեն կարող տառապել: Իմ նման երջանիկ չեն ուրեմն:

## 17 ՕԳՈՍՏՈՍ

Շատ լաւ եմ զգում, որ մարդասէր Տիրոջ կամքն է, որ կրեմ այս տառապանքները: Այն դեղամիջոցները, որոնք պէտք է օգնէին ինձ, ինչպէս իսկապէս սփոփում են ուրիշ հիւանդներին, ընդհակառակն՝ վնասում են ինձ:

«Այսօր Սուրբ Կուսից խնդրելու եմ մեղմել շնչափեղծութիւնդ»:

Ո՛հ, թողէք, որ դա անի այնտեղ՝ Երկնքում:

## 18 ՕԳՈՍՏՈՍ

Շատ եմ տառապում, բայց արդեօք լա՞ւ եմ տառապում: Սա է, ահա, կարեւորը:

Հանգստի պահին ասաց ինձ.

Մայր իմ, խնդրում եմ, կարգացէք այն նամակը, որ ստացել էք իմ համար: Զրկեցի ինձ այն շտապ պահանջերուց, վաղուայ Հաղորդութեանը պատրաստուելու համար:

Տեսնելով, որ մատիտը ձեռքս եմ առնում նշումներ կատարելու համար, ակազցեց.

Արժանիքս կորում է, թերեւս, որովհետեւ այն յայտնեցի ձեզ եւ դուք այն գրի էք առնում:

«Կամենո՞ւմ ես, ուրեմն, արժանիքներ շահել»:

Այո՛, բայց ոչ իմ համար ... : Հոգիների համար, ամբողջ Եկեղեցու կարիքների համար: Վերջապէս, վարդեր նուիրելու համար բոլորին՝ արդարներին ու մեղաւորներին:

Ասացի՝ թէ բաւական համբերատար էր: Պատասխանեց.

<sup>1</sup> Հմմտ. SAN GIOVANNI DELLA CROCE, *Fiamma viva d'amore*, str. 1, 30.

*Մի ակնթարթ անգամ համբերութիւնն չեմ ունեցել, ե՛ս: Իմը չէ այն: Ինչպէս միշտ՝ սխալուում էք:*

Ասացի իրեն. «Իսկ եթէ յանկարծ առողջանաս, որքան տարօրինակ պիտի թուայ այս ամէնը»:

*Եթէ Աստուծոյ կամքը դա լինի, շատ ուրախ կը լինեմ Իրեն այդօրինակ գոհողութիւնն ընծայելու համար: Բայց վստահեցնում եմ քեզ. քիչ բան չէր լինի, այսքան ճանապարհ անցնել եւ ապա ետ վերադառնալ: Ինձ դա, սակայն, չի մտահոգում:*

## 19 ՕԳՈՍՏՈՍ

*Քիչ է մնում ուշագնաց լինեմ: Եթէ իմանայիք՝ թէ ինչ վիճակում եմ գտնուում: Այս գիշերը այլեւս չէի դիմանում. Սուրբ Կոյսին խնդրեցի իր ձեռքերի մէջ առնել գլուխս, համբերելու ուժ տալու համար:*

Իր Խաչը տուեցի իրեն: Համբուրեց քնքշանքով: Յիսուս պատկերուած էր դէպի վար խոնարհուած գլխով: Դիտելով Նրան, ասաց.

*Մեռած է: Նախընտրում եմ, որ Նրան մեռած պատկերեն, որպէսզի թուայ ինձ՝ թէ այլեւս չի տառապում:*

Մի դեղորայք խնդրեց, որն իրեն շատ տհաճ էր:

*Խնդրում եմ յանուն հաւատարմութեան:*

*Ենթակայ եմ միայն այս պահի տառապանքներին: Երբ մտածում եմք անցեալի կամ ապագայի մասին, ուժաթափ ենք լինում ու յուսահատուում:*

## 20 ՕԳՈՍՏՈՍ

Պատմում էինք իրեն մեր միաբանակից քոյրերից մէկի մասին, որը տառապում էր ջղաչին մի հիւանդութեամբ եւ բաւական նեղութիւն էր պատճառում հիւանդապահ քոյրերին: Պատասխանեց մեծ ոգետրուածութեամբ.

*Ինչպիսի երջանկութիւն կը լինէր իմ համար, եթէ հիւանդապահ լինէի ու խնամէի այդ քրոջը: Շնորհն ակելի ազդեցիկ կը լինէր՝ քան բնութիւնը: Այո՛, ինձ շատ հաճելի կը լինէր ... եւ մեծագոյն սէր կը ներդնէի այդ գործում: Ա՛հ, թւում է ինձ՝ թէ կը գոհացնէի այդ քրոջը: Եւ յատկապէս մեր Տիրոջ խօսքի վրայ մտածելով. «Հիւանդ էի ու մխիթարեցիք ինձ»<sup>1</sup>:*

Այլեւս չէր կարողանում խմել իրեն մատուցուող կաթը, որն իր մէջ անշաղթափարելի դժկամութիւն էր ստաջացնում: Հարցրի. «Արդեօք կը խմէի՞ր այս կաթը իմ կեանքը փրկելու համար»: Պատասխանեց եռանդով.

*Այո՛, այո՛: Ահա տե՛ս: Ինչը չէի կարողանում անել Աստուծոյ սիրոյ համար ... :*

Ու մի շնչով խմեց ամբողջ կաթը:

<sup>1</sup> Մտթ 25, 36

Երբ շատ եմ տառապում, ուրախ եմ, որ ես եմ տառապողը, եւ ոչ թէ ձեզնից մէկը:

Խօսեց ինձ մի նամակի մասին, որի փեղկնակ քահանան ենթադրում էր՝ թէ Սուրբ Կոյսը ենթակայ չի եղել մարմնական տառապանքների:

Մայր իմ, այս երեկոյ Սուրբ Կոյսին դիտելիս հասկացայ՝ թէ որքան սխալ ու անհիմն է այդ ենթադրութիւնը. հասկացայ, որ Աստուածամայրը տառապել է ոչ միայն հոգիով, այլ նաեւ մարմնով: Ծամփորդութիւնների ժամանակ ենթակայ է եղել ցրտին ու տոթին, ինչպէս նաեւ՝ յոգնութեանը: Քանի՛ անգամներ է ծոմապահել: Այո՛, նա գիտէ՝ թէ ինչ է տառապելը:

Որքան գեղեցիկ կը լինի, երբ Երկնքում կ'իմանանք այն բոլոր անցուղարձերը, որ տեղի են ունեցել Սուրբ Ընտանիքում: Երբ Յիսուս Մանուկը մեծանում էր, տեսնելով իր Մօրը ծոմի մէջ, թերեւս ասում էր. «Ես նոյնպէս կամենում եմ պահել»: Իսկ Սուրբ Կոյսը թերեւս պատասխանում էր. «Ո՛չ, Յիսուս իմ, փոքրիկս, դեռ չափազանց փոքր ես, ուժերդ դեռ բաւարար չեն»: Կամ գուցէ չէ՞ր համարձակուում արգելել Նրան:

Իսկ բարի Սուրբ Յովսէփը: Որքան եմ սիրում նրան: Նա չէր կարող ծոմապահել, իր ծանր աշխատանքի պատճառով: Ահա տեսնում եմ նրան փայտեր յղկելիս ... երբեմն սրբում է ճակատը ... : Կարեկցում եմ նրան: Ինձ թւում է, որ նրանց կեանքը եղել է այնքա՛ն պարզունակ:

Հարեւան կանայք գալիս էին Սուրբ Կոյսի հետ մտերմօրէն զրուցելու: Երբեմն խնդրում էին իրենց վստահել Յիսուս Մանուկանը, որպէսզի խաղայ իրենց փոքրիկների հետ: Եւ Մանուկն Յիսուս Սուրբ Կոյսի դէմքին էր նայում, իմանալու համար՝ թէ կարող է գնալ կամ ոչ:

Ինձ շատ հաճելի է եւ օգտակար՝ Սուրբ Ընտանիքի մասին մտածելը, տեսնելը նրանց ամբողջովին սովորական կեանքը: Ո՛չ այնպէս՝ ինչպէս պատմում են երբեմն կամ ենթադրում: Օրինակ, իբր թէ Յիսուս Մանուկը կաւէ թուչուններ էր պատրաստում եւ ապա նրանց վրայ փչելով կենդանութիւն շնորհում ու ազատ արձակում: Ո՛չ, Յիսուս Մանուկը այսօրինակ անօգուտ հրաշքներ չէր կատարում: Եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ ինչ որ մի հրաշքի միջոցով չփոխադրուեցին Եգիպտոս, մի հրաշք՝ որը շատ օգտակար կը լինէր եւ նոյնքան էլ դիւրակատար, ողորմած Աստուծոյ զօրութեան համար: Մի ակնթարթում կարող էին տեղափոխուել այնտեղ: Բայց ո՛չ, ամէն ինչ նրանց կեանքում կատարուել է այնպէս՝ ինչպէս մեր պարզ առօրեայում:

Եւ քանի՛ քանի՛ նեղութիւններ, քանի՛ քանի՛ անարդարութիւններ: Քանի՛ անգամներ է զրպարտուել Սուրբ Յովսէփը: Քանի՛ անգամներ չեն վարձատրել նրա աշխատանքը: Ա՛հ, ինչպիսի ապշանքի ենք ենթարկուելու, երբ տեսնենք՝ թէ ինչ տառապանքների են ենթարկուել նրանք:

Մեծապէս ուրախացայ մտածելով, որ որոշ հոգիներ աղօթում են իմ համար: Այնժամ ասացի մարդասէր Աստուծուն. «Կամենում եմ, որ այդ աղօթքները լինեն ի նպաստ խեղճ մեղաւորներին»:

«Ձե՞ս կամենում, որ լինեն քո իսկ սփոփանքի համար»:

Ո՛չ:

Իրեն էի շատել հայեացքս, սիրտս տրտմութեամբ լի էր:

**Տխուր էք, Մայր իմ: Ինչո՞ւ:**

«Որովհետև շատ ես տառապում»:

**Այո՛, բայց նաեւ որքա՛ն խաղաղութիւն ... որքա՛ն խաղաղութիւն:**

Անկատար էր Անատուել մի միջադէպում, ուր չէին կարողացել հասկանալ իրեն: Ասաց մեծ գոհունակութեամբ.

**Ահա, այսպէս աւելի լաւ է:**

**Ա՛հ, Մայր իմ, ի՞նչ կը լինէի արդեօք, եթէ ողորմածն Աստուած զօրավիգ չլինէր ինձ ... : Միայն ձեռքերս են ազատ: Չեն իմանում՝ թէ ինչ է նշանակում այսպէս տառապել: Ո՛չ, մարդ անձամբ պէտք է զգայ՝ հասկանալու համար ... : Ի՛նչ շնորհ է հաւատք ունենալը: Եթէ հաւատք չունենայի, առանց մի վայրկեան անգամ տարակուսելու ինքնասպան կը լինէի ... :**

**Այսքան տառապալի գիշեր դեռ չէի անցկացրել: Ա՛հ, որքան բարի է Աստուած, որ շնորհում է ինձ համբերութեամբ կրել հիւանդութիւնս: Եթէ առողջ լինէի, չէի հաւատայ՝ թէ կարող եմ այսքան դիմանալ: Եւ սակայն չեմ կարծում՝ թէ հասել եմ տառապանքներիս ծայր աստիճանին: Բայց Աստուած ինձ չի լքի:**

«Բանաստեղծութիւններիցդ մէկում գրել ես. ”Այն ամէնը, որ տուել է ինձ, Յիսուս կարող է ետ վերցնել”։ Աստուած խնդրանքդ լսեց ու կատարեց բառացի կերպով»:

**Այո՛, եւ չեմ գղջում:**

**Մարդասէրն Աստուած ինձ չի ներշնչում մօտալուտ մահուան կանխագագում, այլ՝ աւելի մեծ տառապանքներ: Ես, սակայն, անձկութեան չեմ մատնւում այս պատճառով. կամենում եմ ներկայ պահի մասին միայն մտածել:**

Իր հիւանդապահումում.

**Շատ աղօթիր Սուրբ Կոյսին իմ համար, որովհետեւ եթէ դու լինէիր հիւանդ, ես նոյնը կը կատարէի քո համար: Երբ մեր սեփական անձի համար է, շատ չենք համարձակւում ... :**

Իր տառապանքները նուիրել էր փորձութիւնների մէջ գտնուող մի երիտասարդ դպիրի համար: Վերջինս, տեղեկանալով իրողութեանը, մի խոնարհ եւ յուզիչ նամակ էր գրել իրեն: Ասաց.

**Ինչպիսի մխիթարութիւն պարգեւեց ինձ այս նամակը: Տեսայ, որ փոքրիկ տառապանքներս պտղաբերում են: Նկատեցի՞ք արտայայտած խոնարհութեան**

զգացումները: Իմ համար մեծ ուրախութիւն է տեսնելը՝ թէ որքան սէր ու երախտագիտութիւն է հնարաւոր տածել մի հոգու հանդէպ, որ բարիք է գործել մեր համար առանց մեր իմանալու: Ի՞նչ է լինելու ուրեմն Երկինքում, ուր հոգիները ճանաչելու են նրանց՝ ովքեր նպաստեցին իրենց փրկութեանը:

Խօսում էր Սուրբ Կոչսի մասին եւ ասում, որ նրա շուրջ տրուած քարոզներից ոչ մէկն իրեն չէր յուզել:

**Քահանաներն իրագործելի առաքինութիւններ պէտք է ցոյց տան մեզ: Լաւ է նրա առանձնաշնորհումների մասին խօսելը, բայց կարեւորը նրան նմանուելու կերպը սովորեցնելն է: Նա գերադասում է նմանութիւնը:**

**Որքան մեծ հաճոյքով եմ նրան ասում. «Դէպի Երկինք տանող արահետը՝ նեղ ու անձուկ, դիւրաքայլ դարձրիր ամենախոնարհ առաքինութիւնների քո գործադրումով»:**

24 ՕԳՈՍՏՈՍ

Թոքսիստին, որ իր հիւանդութիւնն էր, այժմ սւելանում էր նաեւ փտախտի վտանգը: Հիւանդութիւնը վարաքել էր նաեւ աղիքները: Հարցրի. «Ձե՞ս վիատում»:

**Ո՛չ, թէեւ ամէն բան դէպի վատթարն է ընթանում: Շնչել չեմ կարողանում, իւրաքանչիւր ներշնչումի՝ բուռն կերպով տառապում եմ: Բայց ո՛չ, ո՛չ դէպի վատթարը. ամէն բան դէպի լաւագոյնն է ընթանում:**

25 ՕԳՈՍՏՈՍ

Ասում էի՝ թէ կը կամենայի իմանալ իր մահուան օրը: Պատասխանեց.

**Ես չեմ կամենում: Դա ինձ ամենեւին չի մտահոգում: Տե՛ս, ի՛նչ խաղաղութեան մէջ եմ:**

Միաբանակից քոյրերից մէկն ամէն երեկոյ այցելում էր իրեն եւ անկողնու խորքում նստելով՝ ժպտալով նայում էր նրան (այդպիսով անկասկած կամենում էր քաջալերել հիւանդին, որոշ ժամանակուայ համար ուրախութիւն պարգեւելով նրան): Քոյր Թերեզան նոյնպէս պատասխանում էր ժպիտով: Բայց եւ զգում էի, որ այդօրինակ այցելութիւնը բաւական յոգնեցնում էր նրան: Երբ կամեցայ ճշտել կարծիքս, պատասխանեց.

**Մտածում եմ, որ մեր Տիրոջը նոյնպէս խաչի վրայ դիտում էին այսպէս, երբ ինքն ընկղմուած էր տառապանքների մէջ, քանի որ գրուած է Աւետարանում՝ թէ Նրան նայում էին շարժելով իրենց գլուխները: Այս խորհրդածումս օգնում է ինձ ամբողջ սրտով նուիրելու Իրեն այս զոհողութիւնը: Բայց եւ այո՛, շատ տաժանելի է, երբ դու տառապում ես, իսկ շուրջիներդ նայում են քեզ ժպտալով:**

Մի քանի ժամ լուռ մնաց ցաւերի պատճառով: Երբեմն երբեմն միայն աղաչում էր աղօթել եւ աղօթել սալ իր համար:

**Ա՛հ, որքան պէտք է աղօթել մահամերձների համար: Եթէ իմանայիք ... : Որքան հարկաւոր է Գիշերային Ժամերգութեան աղօթքը. «Տէր, փրկիր մեզ գիշերուայ ուրուականներից»:**

**Կարծում եմ թէ սատանան Տիրոջից թոյլտուութիւն է ստացել փորձելու ինձ ծայրայեղ տառապանքների միջոցով, որպէսզի անհամբերութեան ու անհաւատութեան մատնի ինձ:**

Ողբում էր, բայց այնքա՛ն քաղցրորեն:

*Ա՛հ, ինչպիսի կարեկցանք եմ զգում ինքս իմ հանդէպ: Եւ սակայն, չէի կամենայ նուազ տառապել: Պատրաստ եմ ամէն ինչի ... : Հարկաւոր է Տիրոջ ձեռքերին յանձնուել ... : Քոյրեր իմ, ուզում եմ, որ դուք ուրախ լինէք:*

26 ՕԳՈՍՏՈՍ

Գիշերուայ ընթացքում անկողնի մօտ վառ էին թողել օրհնուած մոմը:

*Օրհնուած մոմի շնորհիւ է, որ այս գիշերն այնքան էլ վառ չանցկացրի: Մայր իմ, որքա՛ն անհրաժեշտ է Տիրոջ օգնութիւնը:*

*Որքան տարօրինակ է՝ վախենալ մահից:*

Ծարմնակ տառապում էր ծարաւից: Քոյր Մարիան հարցրեց. «Մի քիչ սառը ջուր կ'ուզէի՞ր խմել», եւ նրա բերանից դուրս փախաւ այս պատասխանը.

*Ա՛հ այո՛, շատ եմ ուզում:*

Քոյր Մարիան վերսկսեց խօսակցութիւնը. «Մեր Մայրը պատուիրել է քեզ խնդրել անհրաժեշտ ամէն բան: Արա՛ դա յանուն հնազանդութեան»: Պատասխանեց.

*Եւ իրօք խնդրում եմ այն ամէնն՝ ինչի կարիքն ունեմ:*

«Խնդրում ես միայն անհրաժեշտը, ո՛չ երբեք այն՝ որ կարող է սփոփել քեզ»:

*Միայն անհրաժեշտը:*

Ջուրը խմելուց որոշ ժամանակ անց նայում էր սատոյցով լի բաժակին: Ասացինք. «Մի քիչ էլ խմիր»:

*Ո՛չ, լեզուս դեռ բաւական չոր չէ:*

28 ՕԳՈՍՏՈՍ

Պատուհանի մօտ կանգնած, ցոյց տուեց պարտէզի մի մութ անկիւն, ու ասաց.

*Ահա նայէք, տեսնո՞ւմ էք այնտեղ ներքեւում, շագանակենիների մօտ, այն սեւ խոռոչը, ուր չի զանազանում ոչինչ ... : Նման խոռոչում եմ գտնում նաեւ ես, հոգիով ու մարմնով: Ինչպիսի՛ խաւար: Այնուամենայնիւ, խաղաղ եմ զգում ինձ:*

Ապա հայեացքն ուղղելով Տիրամօր արձանին.

*Ա՛հ, իմ անուշիկ Սուրբ Կոյս, ահա՛ թէ ինչու եմ կամենում թողնել աշխարհը. ձանձրոյթ ու յոգնութիւն եմ պատճառում հիւանդապահուհուն, ինչպէս նաեւ վիշտ՝ բոլոր քոյրերիս, այս ծանր հիւանդութեանս պատճառով: Ա՛հ այո՛, ուզում եմ թողնել աշխարհը:*

Ասում էի իրեն. «Սուկալի է տառապելն առանց գեթ ներքին հոգեւոր մխիթարութիւնների»: Պատասխանեց.

*Այո՛, բայց իմը տառապանք է առանց հոգետանջումների: Գոհ եմ տառապելու համար, քանի որ Աստծոյ կամքն է:*

Հարցնում էի. «Գոն կը լինէի՞ր, եթէ անտէին քեզ՝ թէ մեռնելու ես մի քանի օր յետոյ: Նախընտրում ես սա՞, թէ իմանալը՝ որ տառապելու ես դե՛ռ անլի շատ, միշտ անլի ու անլի, ամիսներ ու տարիներ շարունակ»:

*Դա չէ խաղաղութեան ակունքը: Այն՝ ինչ գոհացում է պարզեւում ինձ, միմիայն Աստծոյ կամքն է:*

Յուլիսի 16ին ասել էր.

*Եթէ Տէրն ինձ ասէր. «Եթէ հիմա մեռնես, քեզ կը տամ մի մեծագոյն փառք: Իսկ եթէ մեռնես ութսուն տարեկան հասակում, փառքդ նուազ մեծ կը լինի, բայց այս վերջինն անելի հաճելի կը լինի ինձ», ա՛հ, այնժամ առանց վարանումի կը պատասխանէի. «Աստուած իմ, իմ փառքը չէ, որ փնտռում եմ: Միակ փափաքս Քեզ հաճոյք պատճառելն է»:*

*Մեծ Սրբերն աշխատեցին Տիրոջ փառքի համար, իսկ ես, որ փոքրի՛կ փոքրի՛կ մէկն եմ, աշխատում եմ Նրան հաճոյ լինելու համար, եւ երջանիկ կը լինէի՛՝ անելի մեծ տառապանքների ենթարկուելով, եթէ դրանց նպատակը Նրան գէթ մի ժպիտ պարզեւելը միայն լինէր:*

*Այնքա՛ն կարիքն ունեմ տեսնելու Երկնքի գեղեցկութիւնները: Երկրի վրայ այլեւս ոչինչ չի յուզում սիրտս:*

*Անհաւատալի է՝ թէ ինչպէս բոլոր յոյսերս ի կատար ածուեցին: Երբ ընթերցում էի Սուրբ Յովհաննէս Խաչի գործերը, աղաչում էի Տիրոջը իրագործել ինձնում այն՝ ինչի մասին Սուրբը խօսում էր. այն է՝ որ սակաւաթիւ տարիների ընթացքում սրբացնէր ինձ, կարծես թէ հասած լինէի ծերութեանս, արագօրէն սպառէր ինձ սիրոյ մէջ: Եւ ահա աղօթքս ընդունուեց:*

*Ներքին փորձութիւններս կրում եմ յատկապէս մեր ազգականներից մէկի դիտաւորութեամբ, որն անհաւատ է:*

*Ա՛հ այո՛, փափաքում եմ Երկինք մեկնել: Աստուած իմ, պատուիր այս քաղցր հանդիպմանը խոչընդոտող քօղը՝<sup>1</sup>:*

<sup>1</sup> SAN GIOVANNI DELLA CROCE, *Fiamma viva d'amore*, str. 1.

#### 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Մի փոքրիկ կտոր միս էինք հրամցնում իրեն: Ասաց.

*Որքան ուրախ եմ, որ միսը նոյնպէս ձանձրացնում է ինձ, որովհետեւ չեմ զգում նաեւ սրա համը:*

#### 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ասում էի իրեն, որ երբ իր կողքին որեւէ մէկը ներկայ էր լինում, այնքան անելի նուազ էր տառապում:

*Ա՛հ, միեւնոյնն է ... : Շա՛տ, շա՛տ եմ տառապում, բայց նաեւ սփոփում եմ Սուրբ Կոյսի հետ զրուցելով:*

#### 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ

*Այո՛, շատ լաւ գիտեմ՝ թէ ինչ է տառապանքը:*

#### 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ

*Ի տես մահուան՝ վախի փոքրիկ զգացումներ ունենում եմ թերեւ: Բայց վախ չունեմ յետմահու եկող շրջանից, եւ չեմ զղջում ունեցածս կեանքի համար, ա՛հ ո՛չ ... : Միայն թէ մի տեսակ երկիւղով եմ ինքս ինձ հարցնում. «Ի՞նչ է արդեօք հոգու եւ մարմնի այս խորհրդաւոր բաժանումը»: Առաջին անգամն է, որ նմանօրինակ հարց դրուեց իմ առջեւ: Բայց շտապեցի իսկոյն Տիրոջը յանձնուել:*

*Մի՞թէ պէտք է վախենամ սատանայից: Ինձ թւում է՝ թէ ոչ, որովհետեւ ամէն բան անում եմ յանուն հնազանդութեան:*

#### 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Իր սենեակ մտցրին մանուշակների մի փունջ:

*Ա՛հ ... մանուշակների բուրմունք եմ զգում ... :*

Ապա դէպի ինձ շրջուեց, իմանալու՝ թէ կարո՞ղ էր հոտոտել առանց գոհողութեան ոգու մէջ թերամալու:

#### 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Պարտէզից մի վարդ բերեցին իր համար: Թերթատեց ծաղիկը Խաչելութեան վրայ այնքա՛ն սիրով ու այնքա՛ն ջերմեռանդութեամբ, վերցնելով թերթիկները՝ դրանցով Յիսուսի վերքերը կարծես չորացնելու համար: Ապա ասաց.

*Սեպտեմբերի մէջ ենք, բայց փոքրիկ Թերեզան շարունակում է թերթատել գարնանային վարդը Յիսուսի համար:*

*«Թերթատելով Քո համար վարդը գարնանային՝*

*Կ՛ուզէի չորացնել արցունքները Դէմքիդ»<sup>1</sup>:*

<sup>1</sup> Տե՛ս՝ Յաւելուած Ը.:

Եւ քանի որ թերթիկները անկողնուց սահում էին ու ընկնում յատակին, ասաց.

*Խնամքով հաւաքեցէք այդ թերթիկները, քոյրեր իմ, դրանք ձեզ պէտք կը գան  
աւելի ուշ: Մի՛ կորցրէք եւ ոչ իսկ մէկ հատ<sup>1</sup>:*

*Ա՛հ ... այժմ յուսով եմ՝ թէ աքսորս կարճ կը լինի:*

Բժիշկն ասել էր՝ թէ նա հոգեվարք չէր ունենալու: Բայց քանի որ տառապում էր միշտ աւելի ու  
աւելի, հատաչեց.

*Եւ սակայն ինձ ասել էին՝ թէ չէի ենթարկուելու հոգեվարքի տառապանքներին  
... : Սակայն, վերջին գնահատմամբ, գոհ եմ այն ունենալուս համար:*

«Եթէ հնարաւորութիւնն ունենայիր ընտրելու այն կամ ոչ»:

*Չէի ընտրի ոչինչ:*

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ասում էի իրեն. «Երբ այլեւս Երկնքում կը լինես, այժմեան մեծամեծ տառապանքների փոքրիկ  
ոչնչութիւններ կը թուան քեզ»: Պատասխանեց.

*Դրանք երկրի վրայ էլ են ինձ չնչին թւում:*

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Բժիշկը դրուատանքով էր խօսել նրա հերոսական համբերութեան մասին:

*Ինչպէ՞ս կարող է ասել՝ թէ համբերատար եմ: Ճիշտ չէ: Հեծեծանքներից բացի  
ուրիշ ոչինչ չեմ անում, անդադար հառաչում եմ ու աղաղակում. «Աստուած իմ,  
Աստուած իմ, այլեւս չեմ կարողանում: Ողորմի՛ր, ողորմի՛ր ինձ»:*

22 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ասում էի իրեն. «Իմ խեղճ փոքրիկ: Որքան ես տառապում: Սրբերն անգամ կարծես լքել են քեզ.  
կանչում ես նրանց, բայց նրանք օգնութեան չեն հասնում»:

*Նրանց հանդէպ տածած սէրս, սակայն, չի նուազում: Կամենում են տեսնել՝ թէ  
մինչեւ ո՞ր կը հասցնեմ վստահութիւնս ... :*

24 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Իր զգեստաւորութեան տարեդարձի կապակցութեամբ, քահանայից խնդրեցինք իր դիտաւորութեամբ  
մատուցել Սուրբ Պատարագը: Ծնորհակալութիւն յայտնեց: Բայց նրան հիւժուած ու նուաղած տեսնելով,  
ասացի տխուր ձայներանգով. «Ա՛հ, տեսնո՞ւմ ես, ոչ մի սիւտիանք չստացար»: Հարցրեց.

<sup>1</sup> Թերեզայի միաբանակից քոյրերը վարուեցին նրա խորհրդի համաձայն, հաւաքեցին ու  
խնամքով պահեցին այդ թերթիկները: 1910 թուականի Սեպտեմբերին, Լիզեոյի  
աղքատախնամ քոյրերի հիւանդանոցում, մայրապետներից մէկը լեզուի քաղցկեղով տառապող  
հիւանդ մի ծերունու՝ Ֆերդինանդ Օբրէին մօտեցրեց վարդի այդ թերթիկներն իր մէջ  
պարունակող տուփը: Հիւանդը հաւատքով համբուրեց այդ թերթիկները եւ Սրբուհու  
միջնորդութեամբ Աստուծոց ստացաւ վայրկենական առողջացումը իր բնական միջոցներով  
անբուժելի հիւանդութիւնից:

*Իմ սփոփանքի՞ համար, ուրեմն, մատուցել խնդրեցիք Պատարագը:*

«Քո բարիքի համար»:

*Իմ բարիքն, անկասկած, տառապելն է:*

*Այլեւս շուտով կը գրուցեմ հրեշտակների հետ:*

«Մօտալուտ մա՞րի ես նախագգում»:

*Ա՛հ, Մայր իմ, ի՞նչ նախագգացումների մասին էք խօսում: Եթէ իմանայիք՝ թէ ինչպիսի աղքատութեան մէջ եմ գտնուում: Դուք թերեւս ինձնից շատ աւելին գիտէք: Բանականութիւնս տեսածիս ու լսածիս համաձայն է միայն գործում: Բայց հոգիս, խաւարում գտնուելու հետ մէկտեղ, մի ապշեցուցիչ խաղաղութեան մէջ է:*

«Շուտով Երկնքում կը լինես, հրեշտակներով շրջապատուած»:

*Այո՛, բայց ես չեմ հետեւելու նրանց օրինակին. բոլորն էլ Տիրոջ առաջ ծածկում են իրենց երեսները<sup>1</sup>: Ես կը խուսափեմ այդպէս վարուելուց:*

## 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Երբ մանուկների դաստիարակութեան պատասխանատուութիւնն ունեցողների մասին սկսեցիք խօսել, նրանց մասին՝ ուլքեր երկար կեանք էին ունեցել, ասաց.

*Իսկ ինչ վերաբերում է փոքրերին, դատուելու են մեծագոյն քաղցրութեամբ<sup>2</sup>: Եւ հնարաւոր է փոքր մնալ նաեւ ահաւոր պատասխանատու գործերով ծանրաբեռնուած, նոյնիսկ երկար տարիներ ապրելով:*

*Եթէ մահանայի ութսուն տարեկան հասակում, ապրած լինելով զանազան մենաստաններում ու վանքերում, կքուած՝ պատասխանատու պաշտօնների ծանրութեան տակ, մնացած կը լինէի, վստահ եմ, նոյնքան փոքրիկ՝ որքան այսօր եմ: Եւ գրուած է, որ վերջին օրը Տէրը ոտքի է կանգնելու՝ փրկելու համար այն բոլոր հեգերին ու խոնարհներին, որ բնակւում են երկրի վրայ<sup>3</sup>: Ձի ասում՝ դատելու, այլ՝ փրկելու:*

Այս վերջին օրերին սաստիկ տառապում էր, եւ իր անձկութեան մէջ անա այսպէս արտայայտուեց.

*Ա՛հ, Մայր իմ, ինչի՞ է ծառայում տառապանքի մասին գեղեցիկ ճառեր հիւսելը ... : Ոչնչի, ոչնչի: Հարկաւոր է ճաշակել այն, իմանալու համար՝ թէ ինչ արժէք ունեն այդ գեղեցիկ ճառախօսութիւնները ... :*

*Հիմա իսկապէս զգում եմ, որ այն ամէնն՝ ինչ ասել կամ գրել եմ, գուտ ճշմարտութիւն է ... : Իրօք կամենում էի շատ տառապել Տիրոջ համար, եւ իրօք ուզում եմ այն նաեւ այժմ:*

Ասացի. «Ա՛հ, զարհուրելի եմ կրածդ տառապանքները»:

<sup>1</sup> Հմմտ. Ես 6, 2

<sup>2</sup> Հմմտ. Իմ 6, 7

<sup>3</sup> Սղմ 75, 9-10

*Ո՛չ, զարհուրելի չեն: Սիրոյ փոքրիկ զոհը չի կարող զարհուրելի համարել այն՝  
ինչ Փեսան ուղարկում է իրեն:*

28 ՍԵՊՏԵՄԲԵՐ

*Երկրի օդը պակասում է ինձ: Ողորմած Աստուած, ե՞րբ ես տալու ինձ Երկնքի  
օդը ... :*

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Մահուան նախօրեակը: Առաւօտից ի վեր թում էր հոգեվարքի մէջ: Ցաւատանջ հոնդին ունէր ու  
չէր կարողանում շնչել: Կէսօրին ասաց Մեծաւոր Մօրը.

*Մայր իմ, սա՞ է հոգեվարքը: Ինչպէ՞ս պիտի կարողանամ մահանալ: Բնաւ պիտի  
չիմանամ մահանալու կերպը ... :*

Իր համար կարդում էի մահամերձների աղօթքները: Երբ խօսուեց սատանաների մասին, ձեռքի մի  
մանկական շարժում ունեցաւ, կարծես սպառնալով նրանց, եւ ժպտալով ասաց.

*Ա՛հ ... :*

Մի ձայներանգով, որ կամենում էր ասել.

*Չեմ վախենում նրանցից:*

Բժշկի այցելութիւնից յետոյ հարցրեց Մեծաւորում.

*Այսօ՞ր է, Մայր իմ:*

Մեծաւոր Մայրը պատասխանեց. «Այո՛», իսկ մենք աւելացրինք. «Տէրն այսօր շատ գոհ է»: Քաջութեամբ բացականչեց.

*Ես նոյնպէս:*

*Եթէ չէնց հիմա մահանայի, ի՛նչ երջանկութիւն:*

Երեկոյեան.

*Այլեւս չեմ կարողանում: Ա՛հ, աղօթեցէք իմ համար: Եթէ իմանայիք ... :*

Ժամերգութիւնից յետոյ, երբ իրական մարտիրոսութիւն էր կրում, ձեռքերը միացրեց եւ քաղցր ու  
նեծեծող ձայնով ասաց.

*Այո՛, Աստուած իմ, այո՛, Աստուած իմ, ընտրում եմ ամբողջը:*

«Ուրեմն ահաւոր է կրածդ», ասաց Մեծաւորմին:

*Ո՛չ, Մայր իմ, ոչ թէ ահաւոր, այլ շա՛տ, շա՛տ ... : Ճիշտ այնքան, որքան կարող  
եմ կրել:*

Խնդրեց գիշերը միայնակ թողնել իրեն, բայց Մեծաւորմին չհամաձայնուեց: Քոյր Մարիան ու  
քոյր Ժընըվիէնը, նետեաքար, կիսեցին նրան հսկելու այս մեծ միախարութիւնը:

Իր թանկագին մահուան օրը (ճինգզաբթի):

Առաւօտեան, Սբ. Պատարագի ժամին, հսկում էի նրան: Մի խօսք անգամ չասաց: Ուժասպառ էր ու հետո էր: Իր տառապանքները, զգում էի, անարտայայտելի էին: Մի պահ իրար միացրեց ձեռքերը, եւ աչքերն իր անկողնու դիմաց գետեղուած Սուրբ Կոյսի արձանիկին յառելով, ասաց.

**Ա՛հ, աղօթեցի նրան մեծ եռանդով: Գտնուում եմ զուտ հոգեվարքի մէջ, առանց միւլթարութեան որեւէ նշոյլի:**

Ամբողջ օրուայ ընթացքում չունեցաւ հանգստի եւ ոչ իսկ մէկ պահ. տառապեց, անդադար: Ուժասպառ էր թուում. եւ սակայն, ի մեծ զարմանս մեր, կարողանում էր տակաւին շարժուել ու անկողնու մէջ նստել: Ասում էր.

**Տեսնո՞ւմ էք, Մայր իմ, թէ որքան ուժ ունեւմ այսօր: Ո՛չ, չեմ մեռնում: Դեռ մի քանի ամիս եւս ունեւմ, թերեւս: Չեմ հաւատում այլեւս մահուանը իմ համար: Այլեւս տառապանքին եմ միայն հաւատում, եւ վաղն աւելի վատ է լինելու: Է՛հ, շատ աւելի լաւ: Ա՛հ, Աստուած իմ, սիրում եմ Քեզ, Աստուած այնքա՛ն բարի ու ողորմած: Իմ բարի Սուրբ Կոյս, օգնութեան հասիր ինձ:**

**Եթէ սա հոգեվարքն է, ի՞նչ է ուրեմն մահը:**

**Մայր իմ, վստահեցնում եմ ձեզ, որ բաժակը լի է բերնիբերան: Բայց բարին Աստուած ինձ չի լքի: Ինձ երբեք չի լքել ... :**

**Այո՛, Աստուած իմ, այն ամէնը՝ որ կամենում ես, ... բայց գթա՛ ինձ ... :**

**Քոյրեր իմ, քոյրեր իմ, աղօթեցէք իմ համար:**

**Աստուած իմ, Աստուած իմ, Դու՛ որ այնքա՛ն բարի ես: Այո՛, բարի ես: Ես դա լաւ գիտեմ:**

Ժամը երեքի կողմերը թեւերը խաչաձեւեց: Մեծաւոր Մայրը նրա ծնկներին դրեց Կարմեղոսի Տիրամօր պստիկերը: Մի պահ նայեց, ասպա ասաց.

**Ա՛հ, Մայր իմ, ներկայացրու ինձ Սուրբ Կոյսին, պատրաստիր ինձ լաւ մահանալու:**

Մեծաւոր Մայրը պատասխանեց, որ միշտ ըմբռնած ու գործադրած լինելով խոնարհութիւնը, իր պատրաստութիւնը կատարուած էր: Մէկ պահ խորհեց, ասպա խոնարհաբար արտասանեց հետեւեալ խօսքերը.

**Այո՛, ինձ թւում է, որ միայն ճշմարտութիւնն եմ փնտուել: Այո՛, հասկացել եմ՝ թէ ինչ է սրտի խոնարհութիւնը:**

Ապա կրկնեց.

**Այն ամէնը, որ զրել եմ տառապելու փափաքներիս մասին, ամբողջովին ճշմարիտ է:**

Եւ հաստատուն վստահութեամբ.

**Չեմ զղջում Սիրոյն ընծայուած լինելուս համար:**

Այս պահից ի վեր կարծես ինքը չէ, որ տառապում էր: Զանազան անգամներ, նրան դիտելիս, աչքերիս առջև գծագրում էին մարտիրոսների կերպարանքներ, անողորմ դաժիճների մահասարսուտ գործիքներով յօշոտուող, բայց միշտ զօրացած ինչ որ մի աստուածային ուժով:  
Քիչ անց նորից եռանդով կրկնեց.

**Ա՛հ ո՛չ, չեմ գղջում Սիրոյն ընծայուած լինելուս համար: Ընդհակառակն ... :**

Մի քիչ ատելի ուշ ասաց.

**Երբեք չէի կարող երեւակայել՝ թէ հնարաւոր է այսքան տառապել: Երբեք: Երբեք: Սա չեմ կարող բացատրել, եթէ ոչ՝ հոգիներ փրկելու վառ իղձերովս:**

Անձկագին բացականչեց.

**Ձեմ կարողանում չունչ քաշել, չեմ կարողանում մեռնել:**

Բայց համակամութեամբ ատելացրեց.

**Սիրով կ'ուզեմ դեռ կրել: ...**

**Ամենափոքր փափաքներս իրականացան ... ուրեմն, ամենամեծ փափաքս, այն է՝ սիրուց սպառուած մահանալ, այն նոյնպէս պէտք է իրականանայ ... :**

Ժամը ճիճգի մօտ մենակ էի իր հետ: Դեմքի արտայայտութիւնը յանկարծ փոխուեց: Հասկացայ, որ հոգեվարքը սկսում էր: Երբ միաբանակից քոյրերը ներս մտան, բոլորին ընդունեց քաղցր ժպիտով: Ձեռքում ունէր իր Խաչելութիւնը եւ անդադար նայում էր Նրան:

Երկու ժամ շարունակ կուրծքը ճմլուեց շնչամեղձութիւնից: Դիմագծերը ծամածուռել էին, ձեռքերը՝ կապտել, ոտքերը սառուցի էին վերածուել. դողում էր ամբողջ մարմնով մէկ: Խոշոր կաթիլներով առատ քրտինք էր գոչանում ճակատին ու հոտում դեմքի վրայ: Միշտ ատելի ու ատելի ծանր էր դառնում շնչառութիւնը եւ երբեմն երբեմն ակամայ փոքրիկ ճիչեր էր արձակում՝ ներշնչել կարողանալու համար:

Բերանն այնքան էր չորացել, որ քոյր Փրնըվիւնը, խորհելով սփոփել նրան, մի կտոր սառուց դրեց շրթունքների վրայ: Ոչ ոք երբեւէ չի մոտանայ այն անարտայայտելի հայեացքն ու երկնային ժպիտը, որ նա ուղղեց իր քրոջն այդ պահին, կարծես երախտագիտութիւն յայտնելու, մխիթարելու եւ վերջին «մնաս բարով»ն ասելու համար:

Ժամը վեցին, երբ զանգակատան զանգերը հնչեցին, կանչելով «Հրեշտակ Տեսնո՛ւ» աղօթքին, իր պաղատագին աչքերն ուղղեց դէպի Սուրբ Կոյսի արձանը: Որքա՛ն գեղեցիկ էր իր հայեացքը:

Ժամը եօթը մի քանի թույլ անց, անշարժ համարելով կացութիւնը, Մեծաորումին ազատ արձակեց միաբանակիցներին: Նա հատաչեց.

**Մայր իմ, դեռ հոգեվարքը չէ՞: Դեռ չե՞մ մահանում:**

«Այո՛, դուստր իմ, – պատասխանեց մեր Մայրը, – հոգեվարքն է: Բայց Տէրը թերեւս կամենում է երկարաձգել այն դեռ մի քանի ժամ եւս»:

Պատասխանեց առնական քաջութեամբ.

**Շատ լաւ ... : Յառաջ: Յառաջ: Ա՛հ ... չէի կամենայ նուազ տառապել:**

Եւ աչքերը Խաչելութեան վրայ յատելով.

**Ա՛հ ... սիրում եմ Քեզ ... : Աստուած իմ ... ես ... Քեզ ... սիրում եմ:**

Այս խօսքերն արտասանելուց յետոյ՝ թեթեւակի դէպի ետ ընկաւ, գլուխը դէպի աջ թեքուած: Կարծեցինք՝ թէ ամէն բան վերջացած էր եւ Մեծաորումին իսկոյն ետ կանչեց միաբանակիցներին, ասելով. «Բացէք բոլոր դռները» (այնտեղ 3 դուռ կար): Այս խօսքերը այդ պահին ինչ որ մի

հանդիսաւորութիւն էին իրենց մէջ պարունակում եւ եւ մտածում էի, որ երկնքում Տէրը նոյն խօսքերն էր ասում հրեշտակներին: Միաբանակիցները հազիւ ժամանակն ունեցան նրա անկողնու շուրջը շուրջը ծնրադրելու եւ բոլորն էլ ներկայ գտնուեցին ու վկայ եղան իր վերջին վայրկեանի յափշտակութեանը: Դէմքը շուշանի գոյն էր ստացել, թում էր կատարելապէս առողջ, աչքերը սեւեռուած էին դէպի վեր, լի խաղաղութեամբ ու բերկրանքով:

Քոյր Մարիան, ասելի մօտիկից տեսնելու համար այդ վսեմ հաշեացքը, լապտերով մօտեցաւ նրան: Լոյսի մօտեցումը ոչ մի շարժում չառաջացրեց աչքերում: Այս յափշտակութիւնը տեսեց մէկուկէ-երկու րոպէ. հազիւ վերջացած՝ Աստուծոյ Աղափսիւնը ասանդեց հոգին:

Մահից յետոյ, դէմքի վրայ պահպանեց մի քաղցրիկ ժպիտ: Զմայլելի գեղեցկութիւն էր վերասին ձեռքերէլ: Այնքան ամուր էր բռնել Խաչելութիւնը, որ հարկ եղաւ պոկել այն իր ձեռքերից:

Մարմինը պահպանեց իր այդ վերասին ձեռքերուած գեղեցկութիւնն ու թարմութիւնը մինչեւ թաղումը, որը տեղի ունեցաւ 4 Հոկտ. 1897ին, երկուշաբթի:

Սեպտեմբերի 30ի երեկոյեան նկատեցինք զարմանալի երկու պատահար: Թերեզայի երկար հոգեվարքի ընթացքում, փոքրիկ թոշունների մի բազմութիւն կարծես ժամադրուել էր հիւանդների բաժնի պատմահանի առջեւ գտնուող ծառի վրայ: Ամբողջ կոկորդով երգեցին մինչեւ նրա մահուան պահը: Երբեք այդպիսի համերգ չէինք լսել մեր պարտէզում: Յաւագին տպաւորութիւն ունեցաւ ի տես այն հակասութեան, որ կար այդպիսի տառապանքների ու այդ զուարթ ճոռողիւնների միջեւ: Տարեց քոյրերից մէկը, որ երբեք չէր հասկացել Թերեզային, յետոյ ասաց ինձ. «Նկատեցի՞ք, Մայր իմ, այդ թոշունների երգը: Վստահեցնում եմ ձեզ, որ դա արտասովոր բան էր»:

Աւելացնեմ նաեւ, որ իր հիւանդութեան ժամանակ Թերեզան ասել էր, որ իր մահուան ժամին գեղեցիկ օդ էր լինելու: Արդ, Սեպտեմբերի 30ի ամբողջ օրը մութ ու անձրեւոտ էր, բայց երեկոյեան ժամը 7ի կողմերը ամպերն արագօրէն ցրուեցին ու շատ չանցած տեսանք աստղերի փայլը վճիտ երկնքում:

Քոյր Ազնէս Յիսուսի  
կարմեղական միանձնուհի

